Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

aravot daily

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

15/4111/ 28 հունվարի 2012 շաբաթ

ISSN 1829-2224
12004
9 771829 222003

## Ա

## Բարձր չափանիշներ

Խոսել բանակի 20-ամյա հոբելյանի մասին պաշտոնական վերամբարձ տոնով եւ աչք փակել թերություններիի վրա, ազնիվ ու անկեղծ չէ: Այսօր մեր հասարակությունը, վստահ եմ, մի կողմից՝ հպարտանում է մեր բանակով եւ նրա անցած ճանապարհով, իսկ մյուս կողմից էլ՝ այս կայացած կառույցի նկատմամբ ավելի պահանջկոտ է, քան ցանկացած այլ գերատեսչության հանդեպ: Որովհետեւ, եթե հարկային տեսուչն է կաշառակեր, դա դիտվում է որպես տվյալ ոլորտին հատուկ թերություն, բայց եթե հրամանատարն է այդպիսին, դա ընկալվում է որպես ոչ միայն որպես արատ, այլեւ որպես մեր պետությանը սպառնացող վտանգ: Երբ սովորական, «քաղաքացիական» օլիգարխն է հարստահարում իր տարածքի ժողովրդին՝ մեկ-մեկ ինչ-որ «բարեգործական» ուկորներ շպրտելով նրան, մարդիկ նման «թագավոր-ախպորը» պարզապես ատում են, երբ նույնը անում է գեներալի ուսադիրներով օլիգարխը, նրա ամեն մի քայլը ներքին ընդվզում է առաջացնում: Եթե քաղաքացիական կյանքում են ստրկությունը պարտակում, դա գնահատվում է որպես «մեղթերի» կամ դատախազների հանցագործություն, երբ բանակում է դա արվում, ծառայող զինվորի ամեն մի մայր տագնապով է լցվում:

Այդպիսով, չափանիշները, որոնք կիրառվում են բանակի նկատմամբ, ավելի բարձր են: Այդպես էլ պետք է լինի. մարդիկ այս պետությունից, ըստ էության, քիչ բան են ուզում՝ առաջին հերթին, կյանքի համար քիչ թե շատ տանելի պայմաններ: Իսկ ամենակարեւոր պահանջը հետեւյալն է. այն տղան, որը կանգնած է մեր պետության սահմանին, պետք է իրեն ապահովված զգա թիկունքից, պաշտպանված լինի քրեական հակումներ ունեցող զինվորներից եւ «սամադուր» սպաներից: Իսկ որ դա՝ պաշտպանված լինելը, հնարավոր է՝ դրա գրավականը հենց մեր բանակի 20 տարում անցած փառապանծ ճանապարհն է:

Այս օրերին լրատվամիջոցներում ներկայացվում է Հայոց բանակի տարեգրությունը: Բայց մի հանգամանքի մասին, կարծես, առանձնապես չի խոսվում: Մեր բանակը ստեղծվել է 88-ի ոգուց, երբ բոլորն իրար սիրում էին, երբ բոլորը հպարտ էին, որ հայ են, երբ բոլորը վստահ էին, որ մեր ազգին փայլուն ապագա է սպասվում: Այդպիսի հիմքով կառուցված բանակը չի կարող պարտվել պատերազմում՝ անկախ հակառակորդի զինուժի քանակից եւ սպառազինության հզորությունից: Մեզ այսօր շատ բան է պակասում, բայց այդ բոլոր թերություններից ամենամեծն այն է, որ մենք այսօր չունենք ընդհանուր նպատակ: Կամ՝ գուցե այդ նպատակը կա, բայց մենք չենք կարող այն ձեւակերպել:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Հայոց բանակը բոլորեց իր 20-ամյակը


ՖՈՏՈԼՈՒՐ



ՖՈՏՈԼՈՒՐ

Երեկ ՀՀ Զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն իր ելույթում մասնավորապես ասաց.

«Այսօր մեր մեծ ժամանակակցի՝ Հայոց նոր բանակի տոնն է: Համաշխարհային պատմության էջերը երկար թերթելու դեպքում էլ թերեւս չենք գտնի դեպքեր, երբ ազգային բանակը ստեղծվում է պետական-քաղաքական համակարգի փոփոխության, դաժան պատերազմի, աղետալի երկրաշարժի հետեւանքների վերացման ու շրջափակման պայմաններում: Բանակի տոնը առաջին հերթին հայրենիքի զոհասեղանին իրենց կյանքը դրած նվիրյալների, Ազատամարտի վետերանների տոնն է: Մենք հոգու եւ խղճի պարտք ունենք տալու նրանց. պիտի ուշադրության կենտրոնում պահենք զոհվածների ընտանիքների բոլոր խնդիրները եւ ամեն քայլով պիտի հաստատենք նրանց սկսած գործը հաղթական ավարտին հասցնելու մեր պատրաստակամությունը: Բանակը ժողովրդինն է՝ ստեղծված նրան ծառայելու միակ առաքելությամբ: Մենք մեր ժողովրդին պարտք ունենք տալու. այնպես պիտի անենք, որ 20 տարին բոլորած հայոց բանակն ապացուցի իր՝ արդեն հասուն ու առավել կայացած լինելը: Առաջիկայում էլ ձգտելու ենք է՛լ ավելի թափանցիկ լինել, կատարելագործել եւ արդյունավետ դարձնել բանակի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները՝ առանձնահատուկ ուշադրության արժանացնելով մարդու իրավունքների պաշտպանությանը»:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «ԲՀԿ-ն ինչ որ անում է այսօր, ճիշտ է անում»

«Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը նախորդ օրը հայտարարեց, որ միացել է ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցությունների նախաձեռնությանը՝ Ազգային ժողովում խորհրդարանական լսումներ հրավիրելու համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի վերաբերյալ: Արդյոք դրանով ԲՀԿ-ն փորձում է իշխանությանն «ատա՞մ ցույց տալ»՝ «Առավոտի» հարցին ՀՅԴ խմբակցությունը ներկայացնող Արտյուշա Շահբազյանը պատասխանեց. «ԲՀԿ-ն անում է այն, ինչ որ անում է, եւ կարծում եմ՝ անկեղծ է: Հետագայում ԲՀԿ-ն կշարունակի՞, քվեարկության ժամանակ «կո՞ղմ» կլինի, թե՞ «դեմ»՝ չեմ կարող ասել, բայց այն, ինչ որ անում են այսօր, իրենք համարում են, որ ճիշտ են անում, եւ կարծում եմ, որ անկեղծ են»:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:

### ԱՄ փոխնախագահը դարձավ փոխնախարար

Երեկ հայտնի դարձավ, որ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ Ալեքսան Կարապետյանը նշանակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ: Վարչապետի որոշումից 15 րոպե առաջ, երբ «Առավոտը» փորձել էր ճշտել այս նշանակման վերաբերյալ լուրի իսկությունը՝ «Ազգային միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը մասնավորապես ասել էր. «Պարոն Կարապետյանը տարիներ շարունակ «Երեւաններ» շինմոնտաժային միավորման ղեկավարներից մեկն է եղել: Լավ բան եք ասում, տա Աստված՝ ձեր ձայնը լսելի լինի Բաղրամյան 26-ում եւ Հանրապետության հրապարակում»: Փաստորեն, Աստված մեր ձայնը լսեց եւ շատ արագ:

### ԵԽԽՎ ԼՂ հարցով հանձնաժողովն առայժմ չի գործի

ԵԽԽՎ Լեռնային Ղարաբաղի հարցով ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներն առաջիկայում կարող են դադարեցվել՝ ըստ «Ազատություն» ռ/կ-ի, այդ մասին «Թրենդ» գործակալությանն ասել է ԵԽԽՎ նախագահ Ժան Կլոդ Մինյոնը: «Բյուրոյում այդ հարցի շուրջ քննարկում տեղի ունեցավ, եւ մենք որոշեցինք, որ հանձնաժողովի աշխատանքները մոտ ժամանակներս չեն վերսկսվի: Մեզ ժամանակ է անհրաժեշտ՝ այս հարցը համակողմանի քննարկելու համար»,- ասել է ԵԽԽՎ նախագահը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Երկուշաբթի, ժամը 12-ին, «Փաստարկ» մամուլի ակումբի հյուրն է ԱԺ պատգամավոր Արտակ Զաքարյանը:

### Եղանակ

Երեւան -7 +5, Շիրակ -17 +1, Կոտայք -17 +1, Գեղարքունիք -17 +1, Լոռի -12 +2, Տավուշ -9 +4, Արագածոտն լեռներ -17 +1, Արագածոտն նախալեռն. -7 +5, Արարատ -8 +5, Արմավիր -8 +5, Վայոց Ձոր լեռներ -16 +2, Վայոց Ձոր նախալեռն. -9 +6, Սյունիքի հովիտներ -8 +7, Սյունիքի նախալեռներ -10 +2

## «Իմաստ չունի այս մակարդակին իջնել»

«Քաղբանտարկյալների եւ հալածյալների պաշտպանության կոմիտեի» համահիմնադիր, նախկին քաղկալանավոր Կարապետ Ռուբինյանն aravot.am-ի խնդրանքով անդրադառնալով ՀԱԿ-քաղկալանավորներ հեռակա՝ լրատվամիջոցներով ծավալվող, բայց կոշտ բանավեճերին, նախ ճշտեց, թե այսօր արդեն քաղբանտարկյալ կամ քաղկալանավոր չեն, «որովհետեւ բոլորն էլ նախկին են», ապա հավելեց, թե որեւէ մեկին քաղբանտարկյալ համարելու կամ չհամարելու իրավասություն ոչ ոք չունի. «Ոչ ոք ո՛չ իրավասություն ունի ռեւիզիա անելու, ո՛չ նոր չափանիշներ առաջադրելու: Քաղբանտարկյալ են բոլոր նրանք, ովքեր քաղաքական դրդապատճառներով էին հետապնդումների ենթարկվում, ձերբակալվել, կալանավորվել ու դատապարտվել են: Այստեղ նոր բաներ նկարելու ո՛չ կարիքը կա, ո՛չ էլ իմաստը: Ինչ-որ մարդկանց նյարդերը երեւի տեղի են տալիս, ու սկսել են ինչ-որ անիմաստ խոսակցություններ, ինչը, մեղմ ասած՝ ողջունելի չէ»:

Ի պատասխան մեր հարցին, թե՝ ո՞րն է սկսված այս բանավեճի պատճառը, արդյոք միայն ա՞յն, որ այդ նոր հռչակված «չքաղբանտարկյալները» այլեւս ՀԱԿ-ական չեն, Կարապետ Ռուբինյանն ասաց, թե՝ անշուշտ, պատճառը կողմերի միջեւ հակասություններն են. «Որոշ մարդիկ փորձեցին ոչ թե քաղաքական բանավեճի, այլ իրենց ընդդիմախոսներին սին մեղադրանքներ ներկայացնելու միջոցով պաշտպանվել, ու այսպես՝ խոսքը խոսքի ետեւից եկանք ու հասանք շատ տհաճ իրավիճակի, երբ մարդիկ սկսում են իրար մեղադրանքներ ներկայացնել»:

Ռուբինյանը համամիտ էր այն դիտարկմանը, թե՝ այսօրինակ էժանագին բանավեճերը արժեզրկում են ե՛ւ Համաժողովրդական շարժումն ու այդ մարդկանց պայքարը, ե՛ւ այդ քաղբանտարկյալ կոչված «կարգավիճակը» կամ թե՝ «իմունիտետը»: «Միանշանակ այդպես է: Սա, իհարկե, իր պատճառներն ունի. այն մթնոլորտը, որ կա՝ երբ բուն պայքարը խեղաթյուրվել է կամ վերածվել է այլ բանի, անշուշտ, իր ազդեցությունն ունենում է: Բայց նաեւ այն, որ իմաստ չունի այս մակարդակին իջնել՝ միանշանակ է»,- հայտարարեց նախկին քաղկալանավոր Կարապետ Ռուբինյանը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

## «Համմեր»-ից վայր ընկած ուղեւորը մահացել է

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի ոստիկանության Կոտայքի քննչական բաժանմունքում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրօր-ի 242 հոդվածի 2-րդ մասի (ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) հատկանիշներով: Ինչպես հայտնում է Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը՝ երեկ, ժամը 00.15-ի սահմաններում, Երեւան-Սեւան ավտոճանապարհի 3-րդ կմ-ին՝ «Ագուլիս» հայկական խոհանոցի դիմաց, Երեւանի Անդրֆեդերացիայի 2-րդ փողոցի բնակիչ, 22-ամյա Ալվինա Հարությունյանի վարած «Համմեր H-2» մակնիշի 18 UO 524 համարանիշի ավտոմեքենայի ուղեւորի ընթացքի ժամանակ վայր է ընկել ուղեւոր, Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի բնակիչ 22-ամյա Նարեկ Ձարգարյանը:

Ընկնելու հետեւանքով Ն. Ձարգարյանը ստացել է մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել հիվանդանոց, սակայն գիտակցության չգալով՝ մահացել է: Ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Կոտայքի բաժնի տուգանային հրապարակ:

# Վարկաբեկվում է քաղբանտարկյալներից ոմանց պատմությունը

«Առավոտի» հարցազրույցը Իրավունքի եւ ազատության կենտրոնի ղեկավար, իրավապաշտպան Վարդան Հարությունյանի հետ:

- Իբրեւ Քաղաքական բանտարկյալների եւ հալածյալների պաշտպանության կոմիտեի նախկին համակարգող՝ ինչպե՞ս եք վերաբերվում վերջերս ծավալվող բանավեճերին, թե ով ինչ պայմաններում է եղել ՔԿՀ-ում, ով է քաղբանտարկյալ, ով՝ ոչ, ով ինչ պայմաններով է ազատ արձակվել եւ այլն:

- Նախկին քաղբանտարկյալների մասնակցությամբ սկսված այս վեճը, որ ավելի շուտ ոչ թե վեճ, այլ ցածրակարգ ռազբորկա է հիշեցնում, տխրեցնող է: Որպես խորհրդային տարիների քաղբանտարկյալ, որն իր կյանքի մի ոչ փոքր հատված անց է կացրել կալանավայրերում եւ լավ է պատկերացնում այդ միջավայրը՝ վստահորեն կարող եմ ասել, որ շատ ավելի հեշտ է կալանավայրում քաղբանտարկյալ լինելը, քան ազատվելուց հետո, արդեն դրսում, նախկին քաղբանտարկյալի կոչումը բարձր պահելը:

Տխրեցնող է, երբ նախկին քաղբանտարկյալն, արդեն ազատության մեջ, մեկն ինքնահաստատվելու նպատակով, մեկն իր օրվա հացի հարցը լուծելու համար, մյուսը կալանավայրում ունեցած խնդիրներից ձերբազատվել չկարողանալու պատճառով, մեկ ուրիշը թվացյալ կամ տեղին վիրավորանքից դրդված՝ մտնում է այս կարգի հրապարակային պարզաբանումների դաշտ: Մարդը քաղբանտարկյալ է դառնում ոչ թե իր, այլ օրվա իշխանությունների կամքով, բայց արդեն ներկա ու նախկին քաղբանտարկյալի կարգավիճակը որպես պարտավորություն կամավոր է հանձն առնում, ու կարծում եմ, պետք է դրանից բխող պարտականությունների շրջանակներում մնա:

Այդ օրվա իշխանություններն են նրանց բոլորին իրենց անօրեն դատարանների միջոցով բանտարկել, այդ օրվա իշխանություններն են որոշել, թե նրանցից ով ինչ պայմաններում է նստելու, ում դուռն է փակ մնալու, իսկ ում դուռը բաց, ով է երբ եւ ինչ պայմաններով ազատ արձակվելու, ում ինչքան ու ինչ կարգի ճնշումների են ենթարկելու, իսկ ում բացարձակապես չեն ճնշելու, ում նկատմամբ են ֆիզիկական բռնություն կիրառելու եւ ում մատով անգամ չեն կպնելու: Սա պարզ ճշմարտություն է: Զարմանալի է, որ երեք տարի շարունակ տարատեսակ փորձությունների ենթարկված մարդկանցից ոմանք չկարողացան այնքան փորձառություն ձեռք բերել, որ այսօր կարողանային վեր կանգնել իրար այս կարգի մեղադրանքներ ներկայացնելու գայթակղությունից:




Քաղաքական հետապնդումներ ու հալածանքներ իրականացնող իշխանությունների կամայականությունների արդյունքում հասարակական տարբեր կարգավիճակներ ու կյանքի մասին տարբեր պատկերացումներ ունեցող մարդիկ հայտնվեցին մի ճամբարում եւ քաղբանտարկյալներ դարձան: Այս հանգամանքը նրանց կարող էր եւ պետք է հաշտեցներ: Նրանցից շատերը, ինչքան ես գիտեմ, այլեւս բարեկամներ են, բայց ոմանք հաշտեցման եւ բարեկամության համար, պարզվում է, դեռ ճանապարհ ունեն անցնելու:

- Թեեւ մանկական պատճառաբանություն է՝ «ով առաջինը սկսեց»-ը, բայց Ձեր կարծիքով՝ ո՞վ է այս ամենի նախահարձակ մեղավորը, պատասխանատուն, ո՞վ սկսեց նման քննարկումները:

- Վստահ եմ, որ այս ամենն իշխանությունների մշակած սադրանքի արդյունքն է: Ոմանք ակամա դառնում են այս սադրանքի մասնակիցը: Սա խոսում է այս վեճ-պարզաբանմանը մասնակցածների միամտության ու անհեռատեսության մասին: Նրանցից յուրաքանչյուրի նետած բումերանգը հենց իրեն է վերադառնում: Այն, ինչ մեկն ասում է մյուսի մասին՝ նույնը կարող է ասել այս մեկն իր մասին ու ասում է: Սա ենք հասկանում մամուլում եղած նրանց փոխիրաձգություններից: Այս պահին արդեն հարկավոր է խոսել ոչ թե այն մասին, թե ով առաջինը խոսեց, այլ այն մասին, թե ով առաջինը ԿԼՌԻ:

- Չե՞ք կարծում արդյոք, որ այսպիսով ընդհանրապես վարկաբեկվում է քաղաքական դրդապատճառներով կալանավորվածների անցած 3 տարիների պատմությունը:

- Այո, իհարկե, վարկաբեկվում է: Բայց ցանկանում եմ հատուկ շեշտել, որ վարկաբեկվում է ոչ թե քաղբանտարկյալ հասկացությունն ընդհանրապես, այլ 2008-ի նախագահական ընտրությունների հետեւանքով քաղբանտարկյալների կարգավիճակով կալանավորվածներից ոմանց, միայն ոմանց պատմությունը: Մենք գիտենք նախկին եւ ներկա փայլուն քաղբանտարկյալների, ովքեր կարողանում եւ կարողացել են բարձր պահել այդ կոչումը եւ վեր կանգնել տարատեսակ կենցաղային ու առօրեական վեճերից ու առեւտուրներից:

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

# ԵԽԽՎ-ում ընդունվեց թուրքերի առաջարկը՝ արխիվները բացելու վերաբերյալ

Արդեն հաղորդել ենք, որ ԵԽԽՎ-ն այսօր ընդունեց «Բնակչության բռնի տեղահանումը որպես մարդու իրավունքների խախտում» բանաձեւը: Քննարկման ընթացքում ելույթ ունեցավ թուրք պատվիրակ Փելին Գյունդեշ Բակիրը՝ որպես ընդամենը տեղահանման, հիվանդությունների ու պատերազմի հետեւանք ներկայացնելով 1912-1922թթ. Թուրքիայիում հայերի «մահացության բարձր աստիճանը»: Ելույթ ունեցավ նաեւ Գանիրա Փաշաեւան՝ դժգոհություն հայտնելով, որ զեկույցում անտեսվել են հարյուր հազարավոր ադրբեջանցիները, որոնց «հայկական զինված ուժերն արտաքսեցին իրենց տներից եւ հողերից»: Եվ վերջապես՝ խոսեց նաեւ Հերմինե Նաղդալյանը, որը կարեւորեց, որպեսզի իրականացվի զեկուցողի առաջարկը՝ իրավական ու քաղաքական ինստիտուտների մասին, որոնք դիտարկում կիրականացնեն բնակչության բռնի տեղահանման եւ ցեղասպանության վերաբերյալ: Նաեւ նկատեց, թե Օսմանյան կայսրության հանցագործությունները պետք է քննարկվեն առանց քաղաքական ազդեցության՝ եզրափակելով, թե նավթն ավելի կարեւոր չէ, քան արյունը:



Թուրք եւ ադրբեջանցի պատվիրակների առաջարկները ներկայացնում էր տիկին Բակիրը:

Թուրք եւ ադրբեջանցի պատվիրակները մի քանի առաջարկներ էին արել բանաձեւում ուղղումների վերաբերյալ, որոնցից ընդունվեց միայն մեկը:

Մերժվեց առաջարկը, որ բանաձեւում ներառվի նաեւ «Ղարաբաղ» բառը: ԵԽԽՎ-ում Ադրբեջանի եւ Թուրքիայի պատվիրակները չհաջողեցին բանաձեւում ավելացնել եւս մի պարբերություն, որ բանաձեւի դրույթները չեն տարածվում պատերազմի ժամանակ տեղի ունեցած բռնի տեղահանման վրա, կամ եթե դրա պատճառն ազգային անվտանգության սպառնալիքներն են, ասենք՝ դավաճանությունը կամ միանալը թշնամու բանակին, ապստամբությունը եւ բռնությունները: Մերժվեց նաեւ բանաձեւում ներառել հետեւյալ պարբերությունը. «Այս զեկույցը եւ դրա բանաձեւի հետեւանքները կիրառելի են միայն այն դեպքում, եթե պատմաբանների կողմից ապացուցված են էթնիկ զտումները»: Նշենք, որ այս բոլոր առաջարկները ներկայացնում էր տիկին Բակիրը, իսկ նրան ընդդիմախոսում էր Արմեն Ռուստամյանը:

Ընդունվեց թուրք եւ ադրբեջանցի պատվիրակների միայն մեկ առաջարկ, եւ բանաձեւում ներառվեց հետեւյալ պարբերությունը. «Երկու երկրների միջեւ հակասության դեպքում՝ տեղահանված բնակչության կամ դրա հետեւանքների վերաբերյալ, երկու երկրները պետք է բացեն իրենց արխիվները եւ ձեւավորեն հանձնաժողով, որում պետք է ներառվեն երկու երկրներից պատմաբաններ ու գիտնականներ: Անհրաժեշտության դեպքում նրանց համար ամբողջապես մատչելի կլինեն երրորդ երկրների արխիվները: Խնդիրը կքննվի գիտականորեն, եւ փոխհամաձայնությունը ձեռք կբերվի ավելի անաչառ կերպով գիտնականների կողմից, քան քաղաքական գործիչների: Պատմության քաղաքական շահարկումը ոչ մի առումով ընդունելի չէ»:

Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 28.01.2012

# ՀՅԴ-ի նամակը ԱԺ-ում տեղ-տեղ է տեղ հասել

## ՀՅԴ-ն ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելու հարցով իր նախաձեռնությունն ավարտված չի համարում



«Առավոտը» երեկ արդեն հաղորդել էր (http://www.aravot.am/2012/01/25/31067/), որ ՀՅԴ խորհրդարանական խմբակցությունը դեռ անցյալ տարեվերջին ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելու հարցով ՍԴ-ին ներկայացվելիք դիմումի նախագիծ է պատրաստել եւ կից գրությամբ պաշտոնական նամակով ներկայացրել ԱԺ բոլոր խմբակցություններին ու նաեւ անկախ պատգամավորներին: Այս նախաձեռնության անհրաժեշտությունը ծագել էր այն բանից հետո, երբ դեկտեմբերի 8-ին խորհրդարանն իր իշխանական մեծամասնությամբ՝ 48 «դեմ», 4 «ձեռնպահ» եւ 13 «կողմ» քվեարկությամբ մերժեց ՀՅԴ խմբակցության՝ հրատապ հարցի ռեժիմով քննարկված ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելու համար ՀՀ Նախագահին դիմելու նախաձեռնությունը: Հիմա դաշնակցականները, ինչպես նախօրոք էին հայտարարել, մտադիր են պատգամավորների անհրաժեշտ թվով՝ 27 ստորագրություն հավաքել՝ կառավարությանն անվստահություն հայտնելու հարցը ՍԴ-ում քննելու համար:

ՀՅԴ-ի պատրաստած դիմումի նախագծում, որին ենթադրաբար պիտի միանային պատգամավորները, ՍԴ-ին առաջարկվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ եւ 16-րդ հոդվածների եւ «ՀՀ կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի ՆՀ-174-Ն հրամանագրի դրույթները երկրի Սահմանադրությանը (մասնակի) հակասող եւ անվավեր ճանաչել: Ի դեպ, խոսքը 2007թ.-ին նախկին Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ստորագրած՝ «ՀՀ կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» հրամանագրի մասին է:

Դիմումում շեշտված է, թե այնտեղ արծարծված հարցերն ունեն սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն, եւ դիմումի ներկայացումը նպատակ է հետապնդում՝ «ա/ հստակեցնել, որ Սահմանադրությամբ նախատեսված «կառավարության ծրագիր» եզրույթը ունի կոնկրետ սահմանադրաիրավական բովանդակություն, ենթակա է պարտադիր կատարման, եւ այն ամբողջությամբ կամ մասնակի չկատարելը, անկախ պատճառից, հանգեցնում է կոնկրետ իրավական հետեւանքի, բ/ ստեղծել կոնկրետ իրավական հիմքեր կառավարության ծրագիրը փոփոխելու, ինչպես նաեւ ծրագիրը չկատարելու դեպքում կառավարության պատասխանատվությունը ամրագրելու համար, գ/ փաստել, որ սույն մասի ա) եւ բ) կետերում նշված հարցերի առնչությամբ ՀՀ իրավական համակարգում առկա է իրավակարգավորման բաց, ինչը խեղաթյուրում է իշխանությունների բաժանման (տարանջատման) եւ հավասարակշռման (փոխադարձ զսպումների) սահմանադրական սկզբունքը, խոչընդոտում է քաղաքացիների (ընտրողների)՝ Սահմանադրության 30-րդ հոդվածով նախատեսված պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ հանրային շահերի պաշտպանության ոլորտում պետության գործառույթի իրականացմանը»:

Մանրամասն վերլուծության ենթարկելով եւ համադրելով ՀՀ Նախագահի վերոհիշյալ հրամանագրի ու ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթները, ըստ ՀՅԴ-ի ներկայացրած դիմումի նախագծի, պատգամավորները ՍԴ-ին պետք է խնդրեն՝ նկատի ունենալով այն, որ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ եւ 16-րդ հոդվածների, ինչպես նաեւ ՀՀ Նախագահի ՆՀ-174-Ն հրամանագրի դրույթները «չեն պարունակում այնպիսի նորմեր, որոնց համաձայն՝ կառավարությունը պարտավոր է կառավարության ծրագրի կատարման վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն, ինչպես նաեւ, երբ ակնհայտ է կամ ողջամտորեն կանխատեսվում է, որ կառավարության ծրագիրը ամբողջությամբ կամ մասնակի չի կատարվելու, ապա կառավարության գործունեությունը ծրագրին համապատասխանեցնելու համար պետք է փոփոխի եւ Ազգային ժողովի հավանությանը ներկայացնի կառավարության փոփոխված ծրագիրը, ինչպես նաեւ այն, որ այդ դրույթների չկատարումը առաջացնում է կոնկրետ իրավական հետեւանքներ (այդ թվում՝ կառավարության լիազորությունների դադարեցման համար), օրենքի եւ Նախագահի ՆՀ174-Ն հրամանագրի հիշյալ դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 2, 5, 6, 30 եւ 85 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

ՍԴ-ին դիմելիք հայցում նաեւ այսպիսի դիտարկում կա. «Մեր կարծիքով՝ վերը նշված նորմերը փաստում են, որ Սահմանադրության համաձայն՝ իշխանության կրողը ժողովուրդն է, որն այն իրականացնում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմիններով: Եթե անմիջականի դեպքում իշխանության կրողն ինքն է իրականացնում իր իշխանությունը (ազատ ընտրությունների եւ հանրաքվեների միջոցով), ապա ներկայացուցչականի դեպքում իշխանությունն իրականացվում է մասնավորաբար Սահմանադրությամբ նախատեսված օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի եւ ընտրովի Նախագահի միջոցով: Այլ կերպ ասած՝ ժողովուրդը այս դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով, որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը՝ որոշակի ժամկետով: Հետեւաբար Ազգային ժողովն ու Նախագահը պետք է արտահայտեն ժողովրդի կամքը եւ շահերը: Այս համատեքստում է ձեւավորվում եւ գործում ՀՀ կառավարությունը, որը Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով՝ կազմավորումից հետո 20 օրվա ընթացքում, իր ծրագիրն է ներկայացնում ԱԺ հավանությանը: Ծրագրային, այլ ոչ թե անձնավորված կառավարության հիմնական գործոններից է հավանության արժանացած ծրագրով առաջնորդվելն ու այն իրականացնելը: Ծրագրային կառավարության գործունեության նկատմամբ իշխանության միակ կրողի՝ ժողովրդի հսկողությունն իրականացվում է Նախագահի եւ խորհրդարանի միջոցով: Սրանով է հենց պայմանավորված կառավարության նկատմամբ անվստահություն հայտնելու այս 2 ինստիտուտների սահմանադրական իրավունքը:

Մեր համոզմամբ՝ ժողովրդավարական հասարակությունում յուրաքանչյուր ծրագրի իրականացումը պետք է զուգակցվի կատարման ընթացքի մասին հաշվետվության եւ գնահատումների ներկայացմամբ: Ծրագրային կառավարության պարագայում այն առավել քան կարեւոր է, քանի որ նախ՝ այդ ծրագիրը վերաբերում է Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու եւ ՀՀ քաղաքացու գրեթե բոլոր իրավունքներին ու ազատություններին, ինչպես նաեւ պետության ստանձնած պարտավորություններին»:

Ահավասիկ, ՀՅԴ-ի այս նախաձեռնությանը սկզբունքորեն միանալու է, թերեւս, միայն «Ժառանգություն» խմբակցությունը, որի մասին aravot.am-ի հետ զրույցում արդեն իսկ հայտարարել էր խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը: Ինչ վերաբերում է իշխանական խմբակցություններին, ապա ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն «Առավոտին» ասաց, թե մտադիր էլ չեն որեւէ կերպ՝ առավել եւս գրավոր, պատասխանել ՀՅԴ-ականների նամակին, որով վերջիններս խնդրել էին պաշտոնապես դիրքորոշում հայտնել ՍԴ-ին ուղղվելիք իրենց դիմումի նախագծի եւ դրան միանալու առնչությամբ: «Այդ հարցը խորհրդարանում քննարկվել է, եւ մենք պատասխանն անմիջապես տվել ենք»,- հայտարարեց Գալուստ Սահակյանը՝ նկատի ունենալով դեկտեմբերի 8-ի քվեարկության արդյունքները: Մեր հարցին, թե՝ սա նշանակում է, որ պաշտոնական գրությամբ ՀՀԿ-ն իր դիրքորոշումը հավելյալ անգամ հայտնելու անհրաժեշտություն չի՞ տեսնում, խմբակցության ղեկավար Սահակյանը լակոնիկ պատասխանեց՝ բնականաբար:

Ինչ վերաբերում է ԲՀԿ-ին, ապա խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանն ասաց. «Մենք նման նամակ չենք ստացել, մեզ մոտ նման քննարկում չի եղել: Նման նամակ իմ ձեռքը վստահաբար չի ընկել»: Իսկ եթե նամակը ստացած լինեիք, քննարկելո՞ւ էիք, թե՞ ԲՀԿ-ի որոշումն արդեն արտացոլված է դեկտեմբերի 8-ին ԱԺ նիստում տեղի ունեցած քվեարկությամբ: «Ես հիմա պատրաստ չեմ այդ հարցին պատասխանել, որովհետեւ նամակը չեմ տեսել, դրա մասին չեմ զեկուցել, եւ մեր քաղաքական խորհրդում կամ պատգամավորական խմբակցությունում չենք քննարկել»,- մեր ճշտող հարցին ի պատասխան՝ հայտարարեց ԲՀԿ քարտուղարը:

ՀՅԴ խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանի փոխանցմամբ՝ իրենք մինչեւ այս շաբաթավերջ կամփոփեն իրենց նախաձեռնության արդյունքներն ու դիրքորոշում կհայտնեն: ՀՅԴ խմբակցությունն իր այս նախաձեռնությունը տապալվելու դեպքում մտադիր է դիմել ՄԻՊ-ին: Թե դրանից ինչ կփոխվի կամ կփոխվի արդյոք՝ դժվար է ասել:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# ՀԱԿ-ում թերահավատ են ԲՀԿ-ի կեցվածքի նկատմամբ

## Իսկ ՀՅԴ-ում եւ «Ժառանգությունում» համարում են, որ ԲՀԿ-ն այդ քայլն անում է՝ ոչինչ չկորցնելով

«Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը, նախորդ օրն արձագանքելով ՀՀԿ-ի կշտամբանքին, հայտարարեց, որ միացել է խորհրդարանական ընդդիմադիր ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցությունների նախաձեռնությանը՝ Ազգային ժողովում խորհրդարանական լսումներ հրավիրելու համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի վերաբերյալ: ԲՀԿ-ականները բացատրում են, որ իրենց կուսակցության ծրագրում է ամրագրված 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգը, հետեւաբար դա իրենց հոգեհարազատ է: Բայց քաղաքական իրողությունն այժմ Հայաստանում այն է, որ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգով առաջիկա խորհրդարանական ընտրություններն անցկացնելու գաղափարի շուրջ համախմբվել է ողջ ընդդիմադիր դաշտը, այժմ՝ մասամբ նաեւ կոալիցիոն ԲՀԿ-ն, ԲՀԿ խմբակցությունը խորհրդարանում 11 մեծամասնական մանդատ ունի: Իսկ Հանրապետականը՝ կոալիցիոն ՕԵԿ-ի հետ, կառչած է 41 մեծամասնական տեղերից:

Ինչպե՞ս են գնահատում ԲՀԿ-ի այս կեցվածքը ընդդիմադիր ուժերը: Արդյոք այսպիսով ԲՀԿ-ն փորձում է իշխանությանն «ատա՞մ ցույց տալ»: Հայ ազգային կոնգրեսին մաս կազմող «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանն «Առավոտի» հարցին այսպես արձագանքեց. «Տա Աստված, որ ԲՀԿ-ն այսպիսով փորձի ոչ թե «ատամ ցույց տալ» իշխանությանը, այլ անկեղծ լինել իր մղումներում եւ ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ, ինչը, բնականաբար, կծառայի երկրում սահմանադրական կարգը հաստատելու գործընթացի արագացմանը»: Քանի որ «Ժողովրդավարական հայրենիքն» ի սկզբանե բացասաբար էր արտահայտվել ՀՀ առաջին Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ ԲՀԿ-ին արված ռեւերանսներին, Պետրոս Մակեյանից հետաքրքրվեցինք նաեւ՝ եթե ԲՀԿ-ն այնուհանդերձ համալրի ընդդիմադիր դաշտը՝ իր ղեկավարած կուսակցությունը կլքի՞ ՀԱԿ-ը: Պատասխանը եղավ. «Դրանք իրար հետ կապ չունեն: Մենք մեր մտահոգությունն ու տարակարծությունը հայտնել ենք՝ հավելելով, որ ԲՀԿ-ում, բնականաբար, կգտնվեն մտահոգ մարդիկ, եւ եթե կուսակցությունը որոշի իր բոլոր այդ անցած խաղերով ու ճանապարհներով ետդարձ կատարել դեպի ժողովուրդը, կարծում եմ՝ որեւէ խնդիր չի առաջանա: Մեր կուսակցությունը նման հարց չի քննարկի: Բայց՝ տա Աստված՝ ԲՀԿ-ն նման որոշում ընդունի»:

Արդյոք խորհրդարանական ընդդիմության առաջարկին միանալով՝ ԲՀԿ-ն փորձում է իշխանությանն «ատա՞մ ցույց տալ»՝ հարցին «Ժառանգություն» խմբակցության անդամ Լարիսա Ալավերդյանը հակադարձեց. «Ես հարցն այդպես չէի դնի: Քաղաքական այս ժամանակահատվածում որեւէ՝ օրենքով չարգելված մեթոդ կիրառելի է»: Տիկին Ալավերդյանը ԲՀԿ-ի այդ քայլը պայմանավորում է նրանով, որ ԲՀԿ խմբակցությունը մեծամասամբ համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից է կազմված: Նաեւ. «Այս տարիների ընթացքում ԲՀԿ-ն մերժելի կամ ոչ մերժելի մեթոդներով՝ կապ չունի, մտել է լայն հասարակության գիտակցության մեջ՝ որպես թիմ, որպես խումբ՝ Գագիկ Ծառուկյանի ղեկավարությամբ: Այսինքն՝ նրանք որեւէ առումով բան չեն կորցնում, եթե մեծամասնականի դեմ են դուրս գալիս եւ գնում են միայն ցուցակով: Դա կուսակցության ապագա արդյունքների համար նույնիսկ չպարունակող քայլ է»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Նոր ատոմակայանով հարցը չենք լուծի

Մասնագետները գտնում են, որ այն միլիարդներով, որոնք ծախսելու են նոր ատոմակայան կառուցելու համար, ավելի նպատակահարմար է էներգիայի այլընտրանքային աղբյուրները զարգացնել:

Մեծամորի ատոմակայանի՝ ՀԱԷԿ-ի շահագործումը սարքավորումների մաշվածության պատճառով օրեցօր դառնում է վտանգավոր: Այս մասին ահազանգում են թե՛ միջուկային էներգիայի, թե՛ բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնագետները: ՀԱԷԿ-ի աշխատել-չաշխատելու հարցը դրվել էր դեռեւս խորհրդային տարիներին, եւ այն ժամանակ էլ խնդիրը հենց սարքավորումների հնությանն էր առնչվում:

«Եթե 1988 թվականին արդեն որոշված էր, որ ատոմակայանի սարքավորումները հնացել են, ապա 20 տարի հետո առհասարակ դրանք մաշված կլինեն: Մեր այս հարցադրումները մնում են անպատասխան: Եթե մենք սխալ ենք, ապա ոլորտի պատասխանատուները թող փաստաթղթեր ներկայացնեն, որ սարքավորումները փոխվել են, նորացվել են եւ այլն: Մինչեւ հիմա նման ոչ մի փաստաթուղթ մեզ ցույց չեն տալիս, կամ էլ գնանք՝ մեր աչքերով տեսնենք, որ փոխվել են, բայց երբեւէ մեզ թույլ չեն տվել մտնել ատոմակայան: Բայց սա ազգային անվտանգության խնդիր է եւ գաղտնի պահել չի կարելի»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց «Էկոլուր» հ/կ-ի ղեկավար Ինգա Զառաֆյանը: Տիկին Զառաֆյանը հարցը կարեւորում է նաեւ Հայաստանի՝ սեյսմաակտիվ գոտում գտնվելու տեսանկյունից: Մեր այն հարցին, թե արդեն նախատեսվում է նոր ատոմակայան կառուցել, եւ հնարավո՞ր է այլեւս նման խնդիր չունենանք, տիկին Զառաֆյանը պատասխանեց՝ նորի դեպքում էլ ռիսկերը մնում են նույնը:

Ատոմակայանի վառելիքի հումքը ներկրվում է Ռուսաստանից: Քանի որ կառուցվելիք ատոմակայանն ավելի հզոր պետք է լինի, ըստ Ի. Զառաֆյանի՝ ՌԴ-ից ավելի մեծ քանակությամբ հումք են բերելու, ինչը, մասնագետի համոզմամբ, մեր երկրին ավելի շատ է կախվածության մեջ դնելու. «Վառելիքի հումքի պարտքի դիմաց մենք տվեցինք Հրազդան-Սեւան կասկադ ՀԷԿ-ը, իսկ նոր ատոմակայանի դեպքում ավելի շատ հումք են ներկրելու, բա դրա դիմաց ի՞նչ ենք տալու»: Հ/կ-ի ղեկավարի խոսքերով՝ կառավարությունը որոշում է կայացրել նոր ատոմակայանի կառուցման մասին, բայց ռադիոակտիվ թափոնների խնդրի մասին ոչ մի ստույգ բան չի ասում՝ թե որտե՞ղ են թաղվելու այդ վտանգավոր նյութերը. «Գերմանիան, որն այդքան զարգացած երկիր է, մինչ օրս չի կարողանում լուծել այդ խնդիրը: Նրանք իրենց ատոմակայանի ռադիոակտիվ թափոնները երկրից դուրս՝ ինչ-որ կղզում են թաղում, բայց նաեւ հասկանում են, որ հավերժ այդպես վարվել չեն կարող: Իսկ մեզ նման փոքրիկ երկիրն ինչպե՞ս է պատրաստվում լուծել այդ հարցը: Մենք բլոկադայի մեջ ենք, իսկ այդ թափոնները գնացքով, հատուկ պայմաններով են տեղափոխում, այսինքն՝ մենք այդ հնարավորությունը չենք ունենա: Մեր եղած առաջին գերեզմանոցն արդեն լցված է, ատոմակայանի տարածքում հիմա երկրորդն են լցնում: Մի խոսքով՝ սրանք խնդիրներ են, որոնց համար պետք է հասարակական քննարկում լինի, որպեսզի հանրությունը հասկանա, թե ինչ է կատարվելու: Մենք չենք ասում՝ ատոմակայան չունենանք, մութ նստենք, պարզապես պետք է ռիսկերն ամբողջությամբ գնահատվեն, ու տեղյակ պահեն բոլորին»:




«Առավոտը» զրուցեց նաեւ «Բիոսոֆիա» հ/կ նախագահ Գեւորգ Պետրոսյանի հետ: Նրա համոզմամբ՝ ատոմակայանի շահագործումը ոչ միայն էկոհամակարգի համար է վտանգավոր, այլեւ այդ հատվածում ապրող բնակչության: «Մեր բնակչության մեծ մասը Արարատյան դաշտավայրում է բնակվում, եթե վթար լինի, ազգի մեծ մասն է վտանգի տակ լինելու»: Մեր այն դիտարկմանը, որ կառավարությունը պարբերաբար պնդում է, որ վտանգ չկա, պարոն Պետրոսյանն ասաց. «Ի՞նչ է, մենք ճապոնացիներից ավելի՞ անվտանգ բան ենք կառուցել կամ կառուցելու: Նրանք էլ շատ անվտանգ էին կառուցել, նրանք էլ ռիսկեր էին հաշվարկել, բայց տեսանք՝ ինչ պատահեց: Ոչ ոք ապահովագրված չէ նման դեպքերից»: Ինչ վերաբերում է էկոհամակարգին, պարոն Պետրոսյանի դիտարկմամբ՝ քանի որ ատոմակայանում հովացման համար օգտագործվում են Արարատյան դաշտավայրի արտաքին ջրերը, հետո այդ ջրերն ավելի տաքացված վերադարձվում են էկոհամակարգ, վտանգվում է ամեն ինչ՝ կենդանական եւ բուսական աշխարհը: Իսկ նոր կառուցվող ատոմակայանի համար, ինչպես հայտնեց Գ. Պետրոսյանը, ավելի շատ ջուր է պահանջվելու. «Դա նշանակում է, որ Արարատյան դաշտավայրում ոռոգման ջրի պակաս է լինելու»:

Հաշվի առնելով, որ ատոմակայանն ապահովում է մեր երկրի էլեկտրաէներգիայի մոտ 40%-ը, եւ այլընտրանքային էներգիայի դեռեւս լուրջ աղբյուր էլ չունենք, որքանո՞վ է նպատակահարմար եղածը փակել, նորն էլ չկառուցել, մեր այս հարցին ի պատասխան՝ պարոն Պետրոսյանն ասաց. «Նոր ատոմակայանի համար մի քանի միլիարդ դոլար է նախատեսվում ծախսել, եթե այդքան գումար ներդրվի այլընտրանքային էներգետիկայի՝ արեւային, քամու եւ հիդրոէլեկտրակայանների կառուցման վրա, ապա մենք նման ռիսկեր չենք ունենա»: Այն հարցին էլ, թե Հայաստանի կլիմայական պայմանները բավարա՞ր են այնպիսի այլընտրանքային էներգետիկ կայաններ կառուցել, որպեսզի ատոմակայանի արտադրած էլեկտրաէներգիայի ծավալն ապահովվի, պարոն Պետրոսյանն այսպես պատասխանեց. «Եթե նոր ատոմակայան կառուցենք, դրանց շահագործման ժամկետները 35-50 տարի են, այսինքն՝ որոշ ժամանակ հետո կրկին փակել-չփակելու հարց է առաջանալու: Իսկ եթե մտածեն այլընտրանքայինի մասին եւ երկարաժամկետ ծրագրեր կազմեն, ու լուրջ ներդրումներ կատարվեն, ապա այդ խնդիրները չեն առաջանա»:

Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության ու միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի՝ այս հարցերի շուրջ պարզաբանումները կներկայացնենք առաջիկայում:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

## Ջրվեժ

## Ջեյթունում ջրագիծը վերակառուցվում է



Հունվարի 27-ին, ժամը 10.00-18.00-ն դադարեցվել էր Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մյասնիկյան պողոտայի, Գոգոլի 3, 5, 5/1, 7, 9, Ռայնիսի 1, 3, 5, 7, 9, 11, 11/1, 13, 15, 17, 19, Դ. Անհաղթի 10, 12, 14, 16, 18, 23/1, Ռուբինյանց 2, 3, 4, 4/1, 5-9, 10, 11, 13, 15 շենքերի, Վ.Վահյան փ. 10ա շ., Ռուբինյանց փ. 1-ին նրբ. 5շ., Էմինեսկու 1-ին եւ 2-րդ, Նորաշխարհյան, Բուսաբանական, Գերցենի, Պ. Սեւակի՝ մասամբ փողոցների, Շովրոյան փողոցի առանձնատների, Զեյթունի հանրակացարանի 7 ու 8 մասնաշենքերի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ինչպես տեղեկացրեց «Երեւան Ջուր» ՓԲԸ «Արեւմուտք» շահագործման տնօրինության «Զեյթուն» տեղամասի գլխավոր ճարտարագետ Գրիգոր Գեւորգյանը, տարիներ առաջ Դավիթ Անհաղթի փողոցի ջրագծի մոտ 100 մետր երկարությամբ մի հատված ինչ-ինչ պատճառներով պարզապես կառուցվել էր մայթի վրա: Դա ոչ միայն ճիշտ չէր տեխնիկական տեսակետից: Մեծ էր հավանականությունը, որ ցրտերի հետ կապված՝ ջրատարը կարող էր սառչել եւ հանգեցնել տարածքի սպառողների ջրամատակարարման դադարեցմանը:

Խնդրի լուծման նպատակով տեղամասի աշխատակիցները փորել էին խրամուղի, որի մեջ վերամոնտաժվում էր 125 մմ տրամագծով ջրագիծը, ինչպես նաեւ տեղադրվում փական՝ բաշխիչ ցանցի կառավարելիությունը բարձրացնելու համար: Ինչպես հավաստիացրին տեղամասի աշխատակիցները, նշված տարածքների ջրամատակարարումը կվերականգնվի նախատեսված ժամկետում:

«Երեւան Ջուր» ՓԲԸ, հաղորդակցության բաժին

# «ԱրմենՏել» ընկերության գլխավոր տնօրենն ընտրվեց էքստրեմալ մարզաձեւերի ասոցիացիայի պատվավոր նախագահ

«ԱրմենՏել» ընկերության գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն ընտրվեց էքստրեմալ մարզաձեւերի՝ «Ադրենալին» ասոցիացիայի պատվավոր նախագահ: Ընտրության արարողությունը տեղի ունեցավ ասոցիացիայի կազմկոմիտեի եւ նախագահության նիստի ժամանակ:

Համագումարին մասնակցում էր էքստրեմալ մարզաձեւերը (սնոուբորդ, ռեյսինգ, պեյնթբոլ, պարկուր, արտաճանապարհային մեքենաներ, ինչպես նաեւ այլ սպորտաձեւեր) ներկայացնող տարբեր ակումբների եւ ասոցիացիաների ավելի քան 50 ներկայացուցիչ: Կազմակերպության առաքելությունն է աջակցել երկրում էքստրեմալ մարզաձեւերի զարգացմանը, մրցույթների անցկացմանը, ազգային եւ միջազգային կառույցների հետ համագործակցությանը:




«Թույլ տվեք հայտնել իմ խորին երախտագիտությունը՝ Հայաստանի էքստրեմալ մարզաձեւերի ասոցիացիայի պատվավոր նախագահ դառնալու համար: Ես ուրախ եմ այստեղ տեսնել իմ համախոհներին՝ մարդկանց, ում համար էքստրիմը ոչ միայն սուր տպավորություններ ապահովելու միջոց է, այլ նաեւ լիարժեք կյանքով ապրելու հնարավորություն: Անկասկած, այստեղ հավաքվել են խիզախ մարդիկ, որոնք կարողանում են պայքարել եւ հասնել իրենց առջեւ դրված նպատակին: Որպես ասոցիացիայի պատվավոր նախագահ՝ ես հավատում եմ, որ Հայաստանի համար այս նոր մարզաձեւերը դեռ կգտնեն իրենց համակիրներին»,- նշեց «ԱրմենՏել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

«Այսօրվա միջոցառման հաջողությունը խոսում է այն մասին, որ մեր երկրում արդեն հասունացել է այն պահը, երբ էքստրեմալ սպորտաձեւերի բոլոր ակումբներին եւ անհատ սիրահարներին անհրաժեշտ է համախմբվել մեկ կառույցում: Համատեղ ուժերով էքստրեմալ մարզաձեւերի երկրպագուներն ու պրոֆեսիոնալները կկարողանան կազմակերպել նշանակալից մրցաշարեր: Ավելի հեշտ կլինի տեխնիկական հագեցվածության, փորձի փոխանակման եւ միջազգային կառույցների հետ կապեր հաստատելու հարցերի լուծումը»,- նշեց Հայաստանի էքստրեմալ մարզաձեւերի՝ «Ադրենալին» ասոցիացիայի նախագահ Արտաշես Ստեփանյանը:

Միջոցառման շրջանակում Հայաստանի էքստրեմալ մարզաձեւերի՝ «Ադրենալին» ասոցիացիայի եւ Վրաստանի Geoxtreme Ֆեդերացիայի միջեւ ստորագրվեց համագործակցության հուշագիր:

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 28.01.2012

# Նախկին դասախոսը՝ իր բուհի 17 դասախոսների դեմ

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Աղասի Մկոյանի, շարունակում է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի նախկին դասախոս Լուսինե Աշուղյանի (լուսանկարում) հայցով ընդդեմ նույն բուհի ստորաբաժանումների ղեկավարների դատական քննությունը:

Հայցվորը բուհի 17 դասախոսների մեղադրում է իր պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորելու մեջ:

2011թ. օգոստոսի 26-ին պատասխանողները հայցվորի բնակարանի հասցեով բաց նամակ էին ուղարկել նրան, որտեղ տեղ գտած ստորեւ ներկայացվող արտահայտությունները էլ պատճառ են դարձել դասախոսներին դատական պատասխանատվության կանչելու համար:

«Լուսինե Աշուղյանին եւ նրա համախոհներին, ի գիտություն Լուսինե Աշուղյանի եւ նրա թիկունքում թաքնված բանսարկուների, ամբաստանություններից խուսափող, ուսանողական տարիներին չի փայլել գիտական աշխատանք կատարելու հակվածությամբ, անցած տարիների ընթացքում տպագրել է ընդամենը յոթ հոդված, դրսում տպված հոդվածները երեք էջից չեն անցնում, չգնահատված գիտնական, մի՞թե նրա տվյալներով մարդու համար բավական չէր լինի հենց գործակարգավարի պաշտոնը, որում, ի դեպ, նա ընդունվել է աշխատանքի», «արջին կամին չի կարելի լծել» եւ այլն:

«Այդ նախադասություններով պատասխանողները միտումնավոր կերպով ստորացրել ու նսեմացրել են իմ անձը, վիրավորել ինձ, միաժամանակ իրականությանը չհամապատասխանող ոչ ճիշտ տվյալներ են ներկայացրել: Պատասխանողները ոչ միայն կոպիտ կերպով վիրավորել են իմ անձը, այլեւ ներկայացրել են իրենց բարոյական ողջ նկարագիրը: Բոլոր արտահայտությունները վիրավորանքներ ու զրպարտություններ են եւ արատավորում են իմ անձը, արժանապատվությունը եւ գործարար համբավը՝ փորձելով հասարակության առջեւ ինձ ներկայացնել որպես զրպարտիչ, որպես ստոր անձնավորություն»,- բացատրում է Լուսինեն:



Նա նշում է՝ քանի որ նամակը ուղղված է եղել նաեւ ԿԳ նախարարությանը, «ATV» հեռուստաընկերությանը, «Առավոտ», «Հայկական ժամանակ» թերթերին, ուստի պահանջում է դատարանին պարտավորեցնել պատասխանողներին հրապարակայնորեն ներողություն խնդրել վիրավորանք հասցնելու համար, հերքել զրպարտություն համարվող տվյալները, միաժամանակ յուրաքանչյուրից հօգուտ իրեն բռնագանձել վիրավորանքի համար մեկ միլիոն, զրպարտության համար՝ երկու միլիոն ՀՀ դրամ, ինչպես նաեւ դատական ծախսերը:

Դատարանում պատասխանողների ներկայացուցիչ, փաստաբան Ռուբեն Հակոբյանը, սակայն, հայցադիմումն անհիմն է համարում՝ բացատրելով, որ որեւէ զրպարտություն կամ վիրավորանք բաց նամակում տեղ չի գտել:

«Հայցադիմումը ենթակա է մերժման: Հայցադիմումի մեջ նշված արտահայտությունները, որով, իբր, իմ վստահորդները զրպարտել կամ վիրավորել են, ընդամենը հայցվորի երեւակայության արդյունքն է: Որեւէ զրպարտություն կամ վիրավորանք բաց նամակում տեղ չի գտել: Արտահայտությունները ընդամենը գնահատողական դատողություններ են, բնութագրեր են, իրականությանը համապատասխանող հանգամանքներ, ոչ ավելի»:

Ըստ փաստաբանի՝ Լուսինե Աշուղյանին գնահատել են այն մարդիկ, ովքեր կարող էին նման գնահատականներ տալ:

Փաստաբանը դատարանին ներկայացրեց ՎՊՄԻ-ի «Բուսաբանության եւ աշխարհագրության» ամբիոնի վարիչ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ Լոռու մարզի միակ թղթակից անդամ, ՎՊՄԻ-ի նախկին ռեկտոր Ռաֆիկ Եդոյանի դիմումը՝ ուղղված դատարանին, որտեղ նշվում է, թե Լուսինե Աշուղյանը մամուլում, հեռուստատեսությամբ զրպարտություններ է տարածել ինստիտուտի ներկայիս ռեկտորի եւ ղեկավար պաշտոն զբաղեցնող այլ անձանց հասցեին:

«Երկարատեւ լռությունից հետո, ի պատասխան Աշուղյանի հորինվածքներին, բուհի մի շարք աշխատողներ ստիպված ենք եղել պատասխանել հենց նրա կողմից նախընտրած եղանակով՝ բաց նամակով, որը ստորագրվել է 18 հոգու, այդ թվում՝ նաեւ իմ կողմից: Հիշյալ նամակի հեղինակներս Լուսինե Աշուղյանի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ չենք հետապնդել, եւ այդպիսի արտահայտություններ նամակում չենք զետեղել: Նամակում տրվել է Լուսինե Աշուղյանի բնութագիրը, եւ ընդամենը պարունակում է նրա դատապարտելի վարքագծի քննադատություն: Անհասկանալի պատճառներով ես պատասխանողների ցանկում չեմ ընդգրկվել, ինչն ինձ համար նաեւ վիրավորական է»,- նշված է դիմումի մեջ:

Լուսինե Աշուղյանը վերոնշյալ փաստաթուղթն անհեթեթ է համարում՝ բացատրելով, որ այն պետք է նախ լրացվի, նոր հետո միայն կցվի գործին:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

# Ցմահ ազատազրկվածների հարցով

## Բաց նամակ՝ ՀՀ նախագահին

Հարգելի պարոն Ս. Սարգսյան.

Արդեն մի քանի օր է՝ ցմահ դատապարտվածների մի խումբ հացադուլ է հայտարարել եւ նրանցից մեկը՝ Գուրգեն Ռազմիկի Սարգսյանը, որն այդ արել էր կարած բերանով, առողջական լուրջ խնդիրներ ունեցավ, այնուամենայնիվ, բոլորիս պահանջ-խնդրանքը միանշանակ է ու շարունակելի, 19.01.2012թ. հացադուլավորների խմբին միացան եւս երկուսը՝ Հարություն Նուրիջանի Խաչատրյանն ու Արել Լենիկի Չատինյանը:

Խնդրում ենք տվեք մեզ համաներման իրավունքից օգտվելու հնարավորությունը, որն ավելի ուղիղ ու պարտավորեցնող կլինի, քան...

Հավատացնում ենք՝ ցմահ դատավճիռ կայացնելու պահին դատապարտյալը մինչեւ իր վերջին բջիջն այնքան խորն է ապրում ու կրում այդ պատիժը, որ մնացած տարիներին ոչինչ չի մնում ավելացնելու, թերեւս՝ միայն չարություն:

Ուզում ենք հավատալ, որ մի պահ Ձեր ուշադրությունը մեր կողմ կդարձնեք ու հանձինս մեզ կտեսնեք երբեմնի ազատ, բարի նպատակներով ու ձգտումներով ընկերներ, հարազատներ, ընտանիք եւ, ընդհանրապես, առօրյա կյանքի ռիթմ ունեցող սովորական մի քաղաքացու, ով, կամա թե ակամա, սայթաքեց ու մեկընդմիշտ փոխեց ոչ միայն իր, այլեւ իր հարազատների կյանքի որակը: Խնդրում ենք դրսեւորել Ձեր բարի կամքը մեր ու մեր հարազատների կյանքի հանդեպ, թեկուզ որպես բարոյական ապտակ, չէ՞ որ դա եւս դաստիարակչական փորձված մեթոդ է՝ շնորհակալությունը, սերն ու հավատը միասին մեծ ուժ են, անկոտրում համաձուլվածք:

Հնարավորություն տվեք զգալ մեր թիկունքում հայրենիքի շունչը, չէ՞ որ այդ նույն հայրենիքի համար մենք էլ ենք կռվել ու պայքարել: Էլ չենք ասում, որ մեզանից մեկը՝ Արեն Լեոնիկի Չատինյանը, այն ժամանակ դեռ 22 տարեկան, Ղարաբաղի Մարտակերտի 2 սահմանները պատվով պաշտպանելուց ուղիղ 2 ամիս անց արժանացավ այդ դաժան ճակատագրին ու ոչ մի մեղմացուցիչ հանգամանք չկիրառվեց նրա հանդեպ (ինչ է թե՝ վնասել էր կամրջի տակ իր ժամկետանց վկայականն անհարգի շահարկող, փող շորթող ոստիկանին): Անգամ անտեսեցին ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը՝ «Անձի շիզոիդ խանգարում», եզրակացություն N 76, 15.07. 2008թ.: Ի դեպ, այդ հիվանդությունը նա վաստակել է բանակում, այդ նույն հայրենիքի սահմանները պաշտպանելիս:

Ուզում ենք հիշեցնել, որ նույն հայրենիքի որդիներն ենք, թեկուզ պատից այն կողմ, բայց ոչ Մասիսից այն կողմ...

Ակնկալում ենք Ձեր աջակցությունը՝ նամակը տպագրել եւ հնարավորության սահմաններում այցելել «Նուբարաշենի» քրեակատարողական հիմնարկ, վերը նշված անձանցից հարցազրույց վերցնելու համար:

7 դատապարտյալների ծնողներ

### Ոմն Յուրայի կանեփը հանեցին կրծկալից

ՀՀ ոստիկանության լրատվական ծառայությունից հայտնեցին, որ ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները, թմրամիջոց պահելու կասկածանքով, Սարդարապատ գյուղից, «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայով, բերման են ենթարկել Նորապատ գյուղի 20-ամյա մի բնակչի եւ նախկինում դատապարտված նրա երկու ուղեւորներին, որոնցից մեկը՝ կին: Խուզարկությամբ կնոջ կրծկալից հայտնաբերվել է 2 փաթեթ, մեկում՝ 4,7գ, մյուսում՝ 6,2գ կանեփանման զանգված:

Կինը հայտնել է, որ թմրամիջոցը ձեռք է բերել ոմն Յուրոյից: Հայտնաբերվածն ուղարկվել է փորձաքննության: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ Յուրոյի անձը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

# «Սեւ» եւ այսուհետ՝ «սպիտակ» ցուցակներ

**Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ներկայացրել է պաշտոնակատար անձանց ցուցակը, որոնք 2011թ. խախտել են տեղեկատվություն ստանալու իրավունքը: Նրանք մաս կկազմեն «սեւ ցուցակի»:**

1. Արմեն Երիցյան. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
2. Սեյրան Օհանյան. ՀՀ պաշտպանության նախարար
3. Արթուր Գեւորգյան. Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ
4. Սասուն Սաֆարյան. Այգեձորի գյուղապետ
5. Ստեփան Ասլանյան. «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի տնօրեն
6. Տիգրան Վարդանյան. «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրեն
7. Բորիս Մակիչյան. Հյուսիսային համալսարանի ռեկտոր
8. Արման Խաչատուրյան. «Հայփոստ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն (արդեն նախկին)
9. Արմեն Թադեւոսյան. «Համալսարանականներ» համատիրության նախագահ
10. Արման Մեսրոպյան. «Եռյակ» համատիրության նախագահ
11. Վարդուշ Կինկլաձե. «Հ եւ Հ» համատիրության նախագահ
12. Կարինե Խաչատրյան. «Վան» համատիրության նախագահ

Այսուհետեւ ԻԱԿ-ը հրապարակելու է «սպիտակ ցուցակ»: Այդ ցուցակը նրանց մասին է, ովքեր եռամսյակային «սեւ ցուցակներում» հայտնվելուց հետո վերանայում են տեղեկատվության ազատության ոլորտում իրենց գործունեությունը եւ բարեփոխումներ են իրականացրել:

Նախկինում «սեւական» Հարություն Քուշկյանը (ՀՀ առողջապահության նախարար) բացում է այս անգամ 2011թ. «սպիտակ ցուցակը»:

«Սեւ ցուցակի» հրապարակումից անմիջապես հետո ՀՀ առողջապահության նախարարությունը պատասխանել է ԻԱԿ-ի հարցմանը: Բացի այդ, նախարարության այն աշխատակիցը, ում մեղքով կառույցը հայտնվել էր եռամսյակային «սեւ ցուցակում», նկատողություն է ստացել, ինչպես նաեւ նախարար Հարություն Քուշկյանը հրապարակավ հայտարարեց, որ հետեւողական են լինելու, որպեսզի տեղեկատվությունն անպայման միշտ սահմանված ժամկետում տրամադրվի:

Սարգիս Ղարաբեշիշյանը (Ստեփանավանի քաղաքապետ) անպատասխան էր թողել ԻԱԿ-ի 18.04.2011թ. հարցումը, որով ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել Ստեփանավանի ավագանու այն որոշման պատճենը, որով ավագանին սահմանել էր Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող տեղեկատվության տրամադրման վճարի չափը՝ 1 էջի համար 500 ՀՀ դրամ: 2011թ. 1-ին եռամսյակային «սեւ ցուցակում» ընդգրկվելուց անմիջապես հետո Ստեփանավանի քաղաքապետարանի ավագանին իր իսկ նախաձեռնությամբ ուժը կորցրած ճանաչեց ավագանու այն որոշումը (թիվ 19-Ն), համաձայն որի՝ քաղաքապետարանը տեղեկատվության մեկ էջը տրամադրում էր 500 դրամ վարձավճարով: Ստեփանավանի քաղաքապետարանը նաեւ ԻԱԿ-ի հարցմանը տրամադրեց լիարժեք պատասխան: Մանրամասները՝ http://www.foi.am/hy/years/:

Ռ. Մ.

ԱՐՄԵՆ ՇԵԿՈՅԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՎԵՊ

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ



Սկիզբը 187, 192, 197, 202, 207, 212, 217, 222, 227, 232, 237, 242, 247, 5, 10-ում:

Գլուխ տասնվեցերորդ

## ԹԱՆԿԱՐԺԵՔ ՋՐԵՐ

Քաղաքացի Կորեյկոյի կյանքի հետագա ընթացքի մասին ավելի ու ավելի մտածելով՝ ավելի ու ավելի եմ համոզվում, որ քաղաքացի Կորեյկոն որտեղ էլ աշխատեր, սովետական ազնիվ ու օրինակելի քաղաքացի էր հանդիսանալու՝ ոչ միայն էն պատճառով, որ ինքը փողատեր լինելով ու փողի անպետքությունն ամեն վայրկյան զգալով՝ դրամաշորթությամբ ու խաբեությամբ չէր զբաղվելու, այլեւ էն պատճառով, որ ինքը սովետական քաղաքացուն վայել ու սազական բոլոր հատկանիշներն ուներ, եւ հիմա որ իր ուղղությամբ ավելի ու ավելի եմ խորանում, սկսում եմ հասկանալ նաեւ, որ եթե սովետական քաղաքացիներս Կորեյկոյի հատկանիշներն ու Կորեյկոյի չափ փող ունենայինք, Սովետը երբեւէ չէր փլվի, եւ կոմունիզմն էլ անպայման կտեսնեինք, որովհետեւ, ըստ գիտական կոմունիզմի տեսաբանների ու անձամբ Նիկիտա Սերգեյիչի, կոմունիզմի օրոք սովետական բոլոր քաղաքացիները քաղաքացի Կորեյկոյի պես զգալու ու հասկանալու էին փողի ավելորդությունն ու անպետքությունը, իսկ ինչ վերաբերում է քաղաքացի Բենդերին ու նրա կյանքի հետագա ընթացքին, ենթադրելով կարող եմ ասել, որ Օստապ Իբրահիմովիչն էլ քաղաքացի Կորեյկոյի պես վերջապես զգալով ու հասկանալով փողի ավելորդությունն ու անպետքությունը՝ շուտով ճիշտ ճանապարհի վրա էր հայտնվելու. ավելին. Օստապ Իբրահիմովիչը չափազանց մոտիկից եւ նույնիսկ շոշափելով զգալով փողի եւ թանկարժեք համարվող այլեւայլ բաների ավելորդությունն ու անպետքությունը՝ ավելի շուտ ճիշտ ճանապարհի վրա հայտնվեց, քան՝ մենք կենթադրեինք. ինքը, բոլորիս աչքի առաջ, ֆիլմի ամենավերջում ու ճիշտ ճանապարհի ամենասկզբում թոթափելով դեպքերի ու սխալ ճանապարհների փոշին՝ ընկած տեղից վեր կացավ, կանգնեց զույգ ոտքերի ու ճիշտ ճանապարհի վրա եւ իր առագայի մասին փիքր անելով ենթադրեց, որ իր կյանքի շարունակությունը տնային կառավարչությունում է ընթանալու ու տեղի ունենալու, եւ չնայած իր կյանքի շարունակությունն ու հետագան անձամբ մեր աչքով չտեսանք, այդուհանդերձ, իր ենթադրությանը հավատացինք, որովհետեւ տեսել էինք ու գիտեինք, որ Օստապ Իբրահիմովիչը, ի տարբերություն Պանիկովսկու ու Շուրա Բալագանովի, հեչ էլ պորտաբույծ չէր. ավելին. ինքն ամբողջ ժամանակ աշխատանքի մեջ էր եւ ամբողջ ժամանակ ստեղծագործաբար ու քրտնաջան էր աշխատում եւ հարկ եղած դեպքում Կորեյկոյի պես ի վիճակի էր սովետական օրինակելի քաղաքացու տիպար հանդիսանալ, եւ քանի որ ինքը, ի տարբերություն քաղաքացի Կորեյկոյի, անհամեմատ ակտիվ ու անհամեմատ նախաձեռնող էր, սովետական հասարակարգում ու համակարգում ի վիճակի էր նույնիսկ ղեկավար պաշտոնների հասնել, եւ շատ հնարավոր է՝ հենց էդպես էլ եղած լինի, եւ եթե հենց էդպես եղած լինի, շատ հնարավոր է՝ նույնիսկ Իլֆն ու Պետրովն էդ մասին իմացած չլինեն, ճիշտ այնպես, ինչպես որ էսօրվա դրությամբ ինքս իմ հերոսներից շատերի մասին որեւէ տեղեկություն չունեմ, բայց, այսուհանդերձ, Իլֆի ու Պետրովի հետ համեմատվելն անհեթեթություն է՝ ոչ թե էն պատճառով, որ իմ հերոսներն ի վիճակի չեն էդքան մեծ փողերից հրաժարվել, այլ էն առումով, որ ես, ի տարբերություն Իլֆի ու Պետրովի, ոչ միայն ի վիճակի չեմ էդպես ընկերովի ու կիսովի գիրք գրել, այլեւ չեմ էլ պատկերացնում՝ ինչպես է էդ գործն արվում, եւ եթե շատ ուզեմ պատկերացնել, էլի չի ստացվի, որովհետեւ, իմ պատկերացմամբ, գիրք գրելը չափազանց անհատական եւ չափազանց անձնական զբաղմունք է, եւ եթե փորձեմ պատկերացնել՝ ինչպես են Իլյա Իլֆն ու Եվգենի Պետրովը նստել ու միասնաբար գրել աշխարհի լավագույն գրքերից էդ մի քանիսը, ոչ մի կերպ չի ստացվի, որովհետեւ ես գրողներին ու մանավանդ հայ գրողներին բավական մոտիկից ճանաչելով՝ հեչ չեմ պատկերացնում, որ դրանցից երկուսը միասին նստեին եւ միասնաբար որեւէ գիրք գրեին, եւ եթե Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտում սովորած չլինեի ու էդ ինստիտուտի հանրակացարանում էլ երկու տարի ապրած չլինեի, երեւի մտածեի, որ ռուս կամ այլազգի գրողների դեպքում դա հնարավոր է, բայց քանի որ էդ ինստիտուտում երկու տարի սովորել ու էդ ինստիտուտի հանրակացարանում էլ երկու տարի ապրել եմ, կարող եմ ձեզ հավատացնել ու հավաստիացնել, որ այլազգի ու մանավանդ ռուս գրողների դեպքում էլ է էդ բանն անհնարին պատկերացնել, որովհետեւ եթե երկու ռուս գրող առանձնանում են, սովորաբար ոչ թե գրականության ու գրելու մասին են մտածում, այլ՝ բացառապես արաղի, եւ եթե նույնիսկ պատկերացնենք, որ էդ երկուսն էլ խմող չեն եւ, որ ավելի հնարավոր է, խմելուց վերջնականապես բուժվել են, էդ դեպքում էլ է դրանց համատեղ վեպ գրելն անհնարին, որովհետեւ եթե երկու ռուս չխմող կամ խմելուց բուժված գրող առանձնանում կամ պարապ են մնում, ոչ թե գրականության ու գրելու մասին են մտածում, այլ խելք-խելքի տալով՝ ռուս ազգի թշնամյաց սեւ ցուցակներն են մոգոնելով ստեղծում ու կազմում, եւ եթե էդ տիպի ցուցակներով առաջնորդվելով ենթադրենք, որ Իլյա Իլֆն ու Եվգենի Պետրովը հրեաներ են եղել, էլի համոզիչ չի լինի, որովհետեւ եթե երկու հրեաներ առանձնանում ու պարապ են մնում, ոչ թե գրականության ու գրելու մասին են մտածում, այլ՝ աշխարհի գրավման. այսինքն, Իլֆի ու Պետրովի դեպքում հրեական տարբերակից էլ վազ անցնելով՝ ստիպված ենք ենթադրել, որ էդ երկուսից մեկը հրեա է եղել, մյուսը՝ ռուս, ընդ որում՝ առաջինը հրեա է եղել, եւ երկրորդը՝ ռուս, որովհետեւ Պետրով ազգանունը կրող ռուս պատկերացնելն անհամեմատ հեշտ է, եւ, դրանից էլ բացի, հրեան ռուսին հեշտությամբ կհամոզեր ու իր ազգանունը ռուսինից առաջ կգրեր, եւ Իլֆն էդպես էլ արել է, եւ ռուս Պետրովը գործի շահերից ելնելով՝ համաձայնվել է իր ազգանունը Իլֆից հետո գրել, չնայած, շատ հնարավոր է, գործի առյուծի բաժինն անձամբ իրենը եղած լինի, բայց գործի շահերից ելնելով՝ մտքի մեջ ասել է՝ թքա՛ծ,- եւ էս առթիվ չեմ կարող չհիշել ու չնշել սրտաբան Կարոյի ասածը՝ «հրեաներն ընդհանուր առմամբ ծույլ են, բայց ուրիշների արածը յուրացնելու գործում բոլորից աշխատասեր են», եւ ահա Կարոյի ասածը Իլֆի ու Պետրովի կապակցությամբ հիշելով՝ հիմա սկսում եմ մտածել, որ էդ գործի առյուծի բաժինը պիտի որ հենց Պետրովի վրա եղած լինի, եւ Իլֆն, ըստ ամենայնի, հիմնականում կազմակերպչական հարցերով է զբաղված եղել, բայց էս ասածս երեւի մասամբ է իրականությանը համապատասխանում, որովհետեւ իրենց գրածներին ու իրենց գրածներից մանավանդ «Ոսկե հորթին» առնչվելուց հետո համոզվում ես, որ էդ գործին, այնուամենայնիվ, հրեայի գրիչ լավ էլ կպել է, որովհետեւ ռուս մարդն ու մանավանդ ռուս գրողը դժվար թե էդքան անսիրտ վերաբերվեր ակնհայտ ռուս Շուրա Բալագանովին, եւ եթե էդ վեպն ուշադրությամբ եք կարդացել ու էդ ֆիլմն էլ ուշադիր եք դիտել, դուք էլ երեւի նկատած կլինեք, որ էդ Շուրան էդ վեպի գլխավոր հերոսներից միակն է, որ ազգությամբ ռուս է եւ մյուսներից էականորեն է տարբերվում՝ իր անմիջականությամբ, միամտությամբ, պրիմիտիվությամբ, պարզամտությամբ ու տեղ-տեղ էլ՝ բթամտությամբ. այսինքն, պարզից էլ պարզ է, որ առնվազն Շուրայի կերպարին հրեայի գրիչ է կպել, ընդ որում՝ միանգամայն դիպուկ ու միանգամայն անվրեպ է կպել, իսկ ինչ վերաբերում է էդ վեպի ու էդ ֆիլմի մյուս գլխավոր հերոսներին, դրանց մեծ մասն, ըստ ամենայնի, հրեաներ են, եւ եթե հրեաներ էլ չեն, առնվազն ռուսներ չեն, եւ էդ հրեաներն ու կասկածելի ազգությունների կրողները հիմնականում աֆերիստներ ու ավանտյուրիստներ են, եւ էս ասածից ենթադրվում է, որ դրանց բոլորին ազգությամբ ռուս Եվգենի Պետրովի գրիչն է կպել. այսինքն, եւս մի ապացույց, որ չնայած Իլյա Իլֆի անունն ու ազգանունը գրքերի կազմերին ու ֆիլմերի տիտրերում առաջինն է նշվում, այդուհանդերձ, էդ քերթվածքների վրա Եվգենի Պետրովը պիտի որ ավելի շատ տքնած ու չարչարված լինի, իսկ ինչ վերաբերում է անձամբ Օստապ Իբրահիմովիչ Բենդերին, վերջինս թեպետ թուրքահպատակի որդի է ներկայացվում, իրականում ազգային պատկանելությունից զուրկ բացարձակ, բացահայտ ու ակնհայտ պրետ է եւ նույնիսկ հայ ընթերցողի ու կինոդիտողի համակրանքն է վայելում. ավելին. հատկապես հայ կինոդիտողի համակրանքն է վայելում, մանավանդ որ՝ «Ոսկե հորթի» հայերեն տարբերակը Խորիկի ու մյուսների շնորհիվ էապես է ռուսերեն տարբերակին գերազանցում՝ ինչպես որ «Համլետի» հայերեն կրկնօրինակն է ռուսերեն տարբերակին էապես գերազանցում, եւ հավանաբար էդ հանգամանքն էլ է պատճառ, որ մեզանում Համլետներն ու Օֆելյաներն անհամեմատ շատ են, քան Անգլիայում, Ռուսաստանում եւ այլուր, եւ չնայած էս հարցում Մասեհյանի դերակատարությունն էլ է շատ մեծ,

Ա aravot daily
ՇԱԲԱԹ 28.01.2012

պիտի խոստովանենք, որ Խորեն Աբրահամյանի կրկնօրինակումից հետո մեզանում Համլետներն էապես շատացան՝ ինչպես անձրեւից հետո սնկերն են շատանում, եւ չնայած հայ կինոդիտողն Օստապ Իբրահիմովիչ Բենդերին Համլետից պակաս չսիրեց, եւ չնայած «Ոսկե հորթի» դեպքում էլ էին Խորիկն ու էդ ֆիլմի թարգմանիչ Վարոս Հովակիմյանը համապատասխան բարձրության վրա, այդուհանդերձ, հայ կինոդիտողն առ էսօր իր որդիներին Բենդեր կամ Օստապ չի անվանում, եւ էսքանով ուզում եմ իմ էս ինքնուս գրականագիտությունն ու կինոքննադատությունն ավարտել՝ ոչ միայն էն պատճառով, որ ես ոչ բոլոր հարցերի պատասխաններն ունեմ, այլեւ էն պատճառով, որ չեմ ուզում Մուրադյան Դավիթի հացին վայիս լինել, մանավանդ որ՝ վերջինս մի քանի օր առաջ փոխնախարարի պաշտոնից հրաժարվելով՝ որոշել է վերջնականապես ու ամբողջովին նվիրվել գրականությանն ու կինոքննադատությանը, եւ, բացի այդ, եթե ինքնուս գրականագետի ու կինոքննադատի էս իմաստակություններս շարունակեմ, ավելի շատ ու ավելի մեծ հիմարություններ դուրս կտամ, որովհետեւ ես ոչ թե փիլիսոփա եմ, այլ՝ պոետ, եւ պոեզիան էլ, ինչպես համաձայնվեցինք, բանաստեղծություն գրելու կամ չգրելու հետ որեւէ կապ չունի, եւ քանի որ համաձայնվեցինք նաեւ, որ պոեզիան նույնիսկ փիլիսոփայությանն է կենդանություն հաղորդում, ես իմ էս գրականագիտական ու շարժանկարային իմաստակությունները դադարեցնելով՝ ուզում եմ վերադառնալ պոեզիայի դաշտ, եւ քանի որ արդեն համաձայնության ենք եկել, որ մաքուր ու իսկական պոեզիան մեր անցյալն ու մեր հիշողություններն են, պիտի վերջնականապես համաձայնվենք նաեւ, որ բանաստեղծություն գրելը յոթ տարի առաջ բարեհաջող ու վերջնականապես թարգելով՝ ես ավելի ու ավելի եմ առնչվում բուն պոեզիային, քան՝ սրանից յոթ ու ավելի տարիներ առաջ, երբ Աստծո ամեն առավոտ նստում եւ մտքերս ու զգացմունքներս էի հանգավորում, եւ հիմա, երբ բանաստեղծություն գրելը բարեհաջող թարգելս հիշեցի, հիշում եմ նաեւ, որ էդ ուղղությամբ առանձնապես մեծ ջանքեր չգործադրեցի. այսինքն, բանաստեղծությունը թարգելն իմ դեպքում միանգամայն բնական ու անբռնազբոս ստացվեց, եւ բանաստեղծությունը թարգելով՝ սահուն քայլերով ու աննշմար անցում կատարեցի արձակին, եւ ընդամենը մի քանի պատմվածք գրելուց հետո հասկացա, որ ես ոչ թե բանաստեղծություն գրելն եմ թարգել, այլ՝ մտքերս ու զգացմունքներս չափավորելու ու հանգավորելու գործը, եւ չնայած էսօրվա օրով շատերն են փարիսեցիաբար ասում թե՝ բանաստեղծություններս շատ լավն էին, ես ամենից ավելի բանաստեղծություններս հետին թվով գովաբանողների էս գովեստներին չեմ հավատում, որովհետեւ էդ ժամկետանց գովերգակներն էն մարդիկ են՝ ովքեր առ էսօր գլխի չեն ընկել, որ ես ոչ թե բանաստեղծությունն եմ թարգել, այլ՝ մտքերիս եւ զգացմունքներիս չափավորման ու հանգավորման գործը, ու էդ հանգավորումներս հետին թվով ու էսքան ուշացումով գովաբանողները հիմնականում նրանք են՝ ովքեր ժամանակին էդ հանգավորումներս հնարավորինս փնովում էին, եւ հիմա ուշացումով ու էսքան անտեղի դրանք գովաբանելով՝ ընդամենը ուզում են ինձ հասկացնել, որ արձակի ու մանավանդ վեպի ասպարեզում անելիք չունեմ եւ իզուր եմ էսպես անվերջ ու շարունակաբար կոտորում ինձ. այսինքն, էս մարդիկ էն մարդկանցից են, որոնք էս կյանքում որեւէ անելիք չունեն, եւ որոնց անելիքն էս կյանքում որեւէ բան անողների տրամադրությունը գցելն ու որեւէ բան անողների դեմն առնելն է, բայց իմ ու էս վեպիս առումով դեռեւս լուրջ ու շոշափելի հաջողությունների չեն հասնում, որովհետեւ էս վեպիս կապակցությամբ ինձ ոգեւորողներն էապես գերազանցում են ինձ կոտրողներին, եւ հատկապես ու առանձնապես իրենց անձնական արժանիքներով են գերազանցում, ու էս ոգեւորողների շնորհիվ է, որ չեմ կոտրվում ու չեմ դադարեցնում էս սկսածս, որի ավարտը միայն ու միայն Աստծուց է կախված, իսկ ինչ վերաբերում է մյուս ոգեւորողներին ու խրախուսողներին, հուրախություն ու ի զարմանս ինձ՝ դրանց քանակն օրեցօր ավելանում եւ ոչ թե պակասում է, եւ, որ ամենակարեւորն է, էդ ավելացողները նրանք են, ովքեր առանց իմ բացատրության՝ միանգամայն ինքնուրույն են հասկացել, որ ես էս անվերջանալին սկսելով՝ ոչ թե պոեզիան եմ թարգել, այլ, ընդհակառակը, նոր-նոր եմ մուտք գործել պոեզիա, իսկ ինչ վերաբերում է որեւէ բան թարգելուն, վերջերս միայն ու միայն բուքմեյքերական տվայտանքներս թարգելու ուղղությամբ եմ օրուգիշեր մտածում ու մտմտում, որովհետեւ ինչ հնարավոր էր՝ կորզեցի ու ստացա բուքմեյքերական էդ սպանդանոցներից, եւ ստացածս էլ ոչ թե նյութական ու շոշափելի ինչ-որ բան էր, այլ հիմնականում՝ հոգեւոր, ավելի ստույգ՝ հոգեկան, եւ չնայած բուքմեյքերական էդ անմարդկային ու համամարդկային զբաղմունքս էս վեպիս համար ահագին թեմա ու նյութ հանդիսացավ, էսքանից ավելը երեւի արդեն հարամ է՝ ե՛ւ թեմայի, ե՛ւ մանավանդ ապրելու ու խաղալու իմաստով, ընդ որում՝ նախ եւ առաջ խաղալը պիտի կտրուկ թարգվի, հետո նոր՝ էդ խաղերի ու խաղադրույքների մասին գրելը, ընդ որում՝ պիտի ոչ միայն խաղալը թարգվի, այլեւ՝ բուքմեյքերական էդ տարածքներ ոտք դնելը, որովհետեւ հակառակ տարբերակը փորձել եմ եւ, փաստորեն, ոչնչի չեմ հասել, եւ չնայած սկզբնական շրջանում թվում էր թե՝ որոշակի հաջողության, այնուամենայնիվ, հասել եմ, էդ որոշակի հաջողությունն ընդամենը հինգ ու վեց ամիս տեւեց. այսինքն, հինգ ու վեց ամիս էդ բուքմեյքերական տարածքներից ոտքս չկտրելով ու էդ տարածքները ելումուտ անելով՝ հինգ ու վեց ամիս որեւէ խաղադրույք չդրի, եւ հինգ ու վեց ամիս շարունակ էդ խաղադրույքների մեջ խրված նախկին խաղընկերներիս նախանձի առարկան էի, ու երեւի էս ասածիցս ու տրամադրությունիցս կռահեցիք, որ ինքս էլ եմ նորից ու վերստին խրված, ընդ որում՝ ոտովգլխով ու եղածչեղածովս, ինչպես նաեւ՝ ունեցածչունեցածովս, եւ եթե ձեզ թվում է թե՝ բուքմեյքերականների ու խաղադրույքների թեման էս վեպիս տարածքում չափից ավելի եմ արծարծում ու շարաշահում, ինձ միանգամայն հակառակն է թվում. ինձ թվում է, որ իմ բաժին կյանքի եւ իմ բաժին ժամանակի տարածքում եմ էդ խաղամոլությունն ու մոլագարությունը շարաշահում, եւ հիմա վերստին ողջ հոգովս ու մտքովս էդ մոլագարությունը թարգելս եմ տենչում ու երազում, եւ արդեն գիտեմ, որ մոլագարությունս թարգելու համար նախ ոտքս պիտի էդ տարածքներից ու էդ մթնոլորտից կտրեմ, բայց էս հասարակ բանը հստակ գիտակցելով՝ հիմա արդեն բույքմեյքերական այլ մոլագարների պես հստակ գիտակցում եմ, որ էս տեղերից ոտքս կտրելու համար նախ պիտի այլ զբաղմունք ու ժամանցի այլ վայր գտնեմ, որովհետեւ էսքան էս ու այլ բաների մասին գրելով՝ օրվա երկրորդ կեսն ամբողջովին ազատ ու պարապ եմ մնում, ու էն մարդկանցից էլ չեմ, որ առավոտից իրիկուն հեռուստացույցի առաջ ու տնեցիների շնչին նստեմ. այսինքն, եթե նույնիսկ շատ ուզեմ, էս վերջին տարբերակն էլ է անիրական ու անհավանական՝ ինչքան մյուս անիրականներն ու անհավանականները, որոնցից մեկն էլ Օրթախ Աբոյի, Հայկունի, Սերոբի եւ ճշգրիտ գիտությունների այլ ներկայացուցիչների հետ ամեն իրիկվա ութից տասնմեկը «Տրիումֆ» սրճարանում նստելն է, եւ չնայած էս տարբերակն անձամբ ինձ համար առավել պատկերացնելի է, քան՝ նույն էդ ժամերը «Կետիկնոցում» գրողների ու բանաստեղծների հետ մսխելը, այդուհանդերձ, «Տրիումֆի» տարբերակն էլ առանձնապես խելքին մոտիկ չի, որովհետեւ էսօրվա «Տրիումֆում» կամ թեկուզ «Պալավոկում» ամեն իրիկուն մի քանի հոգով մի ժամից ավել նստելու ու ժամանակ մսխելու համար առնվազն հինգ հազար դրամ նկատի պիտի ունենաս, բայց որպեսզի մի քիչ երկար նստեք եւ էդ օրվա բացականերին ավելի երկար ու ավելի բազմակողմանի բամբասեք, պիտի եւս հինգ հազար նկատի ունենաք, այլապես մատուցողն ու մատուցողուհին րոպեն մեկ կանգնելու են շնչներիդ՝ ուրի՞շ ինչ եք ուզում,- եւ դրանց էդ պերմանենտ հարցն ուղղակի հոգիդ հանում է, մանավանդ՝ եթե իսկապես արդեն ոչ սուրճ ես ուզում ու ոչ էլ դրանց էդ թանկարժեք ու սովորական խմելու ջրերից, բայց ճարահատյալ էլի ես սուրճ ու սովորական էդ խմելու ջրից պատվիրում, որովհետեւ էդ պերմանենտ սրճերն ու կիսաթանկարժեք էդ խմելու սովորական ջրերն առողջությանն էնքան վտանգավոր չեն, ինչքան՝ բացակաների վերաբերյալ բամբասանքը կիսատ թողնելը, բայց բամբասանքի թեման միանգամայն ուրույն թեմա է, որին էսպես թռուցիկ անդրադառնալն ուղղակի սրբապղծություն է, եւ բամբասանքի էս ուրույն ու նվիրական թեման ժամանակավորապես դադարեցնելով եւ ավելի հարմար ու ավելի պատեհ պահի հետաձգելով՝ պիտի վերադառնամ սրճարանային ու բուքմեյքերական կյանքերի ու կենցաղների համեմատությանը. էս թռուցիկ համեմատությունիցս հետո երեւի դուք էլ արդեն հասկացաք, որ բացարձակապես ու բացառապես էս վեպի հոնորարներով ապրողի համար ամեն օր բուքմեյքերական հաճախելը ֆինանսական վնասի իմաստով գրեթե նույնն է՝ ինչ ամեն իրիկուն «Տրիումֆում» կամ հարակից լճափի սրճարանում ժամուկեսից երկու ժամ նստելը, եւ էս համեմատությունից «Կետիկնոցը» դուրս եմ թողնում, որովհետեւ «Կետիկնոցն» իսկապես անհամեմատելի է՝ թեկուզեւ էն իմաստով, որ «Կետիկնոցում» աջուձախ ոչ միայն չկայացած գրողներ ու բանաստեղծներ են վխտում, այլեւ՝ չկայացած քաղաքական գործիչներ, որոնք նույնիսկ չկայացած գրողներից ու բանաստեղծներից են վտանգավոր, որովհետեւ չկայացած գրողներն ու բանաստեղծներն իրենց երեւակայությանը զոռ տալով՝ կարող են իրենք իրենց եւ նույնիսկ իրենց շրջապատին համոզելով հավատացնել թե՝ միանգամայն կայացած են, մինչդեռ չկայացած քաղաքական գործիչներն էդ հնարավորությունը չունեն, որովհետեւ եթե էս վերջին երկու տասնամյակներում դեպուտատ կամ առնվազն դեպուտատության թեկնածու չես եղել, անկախ Հայաստանում քեզ ոչ ոք լուրջ քաղաքական գործիչ չի համարի, եւ չնայած «Կետիկնոցում» սուրճն ու էդ սովորական անգազ ջուրը լճափի սրճարանի ու մանավանդ «Տրիումֆի»



սուրճից ու ջրերից անհամեմատ էժան են, «Կետիկնոցում» մի քանի ժամ նստելու ու բացականերից մի քանի ժամ բամբասելու հաշվին էլ կարելի է ցանկացած բուքմեյքերականում չափազանց հետաքրքիր խաղադրույքներ դնել, եւ, ինչպես երեւի կռահեցիք, ես, չնայած գների էական տարբերությանը, նախապատվությունը միանշանակ «Տրիումֆին» ու լճափի սրճարանին եմ տալիս՝ հիմնականում չկայացած գրողների ու չկայացած քաղաքական գործիչների քչության պատճառով, եւ եթե սրան գումարենք նաեւ էն հանգամանքը, որ «Կետիկնոցում» ոչ միայն չկայացած գրողներն ու գործիչներն են հերթապահում, այլեւ՝ կայացածները, եւ եթե հաշվի առնենք նաեւ, որ կայացածները չկայացածներից պակաս վտանգավոր չեն, վերջնականապես հասկանալի կդառնա՝ ինչու եմ նախապատվությունը «Տրիումֆին» ու լճափի սրճարանին տալիս, բայց նախապատվությունը «Տրիումֆին» ու լճափի սրճարանին տալով՝ էդ տեղերից էլ եմ հնարավորինս խուսափում, որովհետեւ ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտվել էն մտքի հետ, որ մի քանի բաժակ սուրճի ու մանավանդ սովորական ու անգազ խմելու ջրի համար կարելի է օրական հինգ հազար դրամ ջուրը գցել. այսինքն, արդեն իսկ իրականություն է դառել էն, ինչը կապիտալիզմի առաջին տարիներին կատակով ենթադրում էինք. եթե հիշում եք, կատակով ասում էինք, որ եթե էսպես շարունակվի, շուտով խմելու ջուրն էլ փողով կդառնա. եւ ահա խմելու ջուրը փողով է՝ տանն ու մանավանդ սրճարաններում, եւ էս իրողության հետ ճարահատյալ հաշտվելով՝ ես, այնուամենայնիվ, նախապատվությունը «Տրիումֆին» ու լճափի սրճարանին եմ տալիս՝ ոչ միայն չկայացած ու կայացած գրողների ու քաղաքական գործիչների քչության պատճառով, այլեւ էն պատճառով, որ էս երկու տեղերում էլ հաշիվը փակելու գործը Շուրիկի, Հայկունի, Վարոյի եւ հիմնականում Օրթախ Աբոյի վրա է, եւ, որ ամենակարեւորն է, նրանք էդ սուրճերի ու ջրերի հաշիվը հաճույքով են փակում, եւ մանավանդ Օրթախն է էդ գործը հաճույքով անում, եւ դա միանգամայն բնական է, որովհետեւ Օրթախ Աբոն «Տրիումֆում» ու լճափի սրճարանում յուրայինների հետ նստելուց մոտավորապես էն հաճույքն է ստանում, որը ես բուքմեյքերականներից ու խաղադրույքներից եմ ստանում, դրան էլ գումարած՝ էդ օրվա բացակա ընկերներից բամբասելու հաճույքը, բայց եթե ասեմ թե՝ Օրթախը բացականերից բամբասելուց ավելի է հաճույք ստանում, քան՝ մյուսներս, սխալ ու անարդար կլինեի:

Շարունակությունը՝ հաջորդ շաբաթ

# Սյունիքի մարզկենտրոնի տեսքը խաթարված է

## Կապանում շատերը չգիտեն ապօրինի շինարարության համար նախատեսված պատիժների մասին

Սյունիքի մարզկենտրոն Կապանում ավելի շատ գործում է հայկական մենտալիտետը, քան օրենքը: Քաղաքի ճարտարապետական տեսքը, ըստ մասնագետների, խաթարվել ու դեռ շարունակում է խաթարվել: Բանն այն է, որ Կապանի թե՛ կենտրոնական եւ թե՛ ծայրամասային թաղամասերում քաղաքացիներն ինքնակամ իրենց բնակարաններին կից պատշգամբ են կառուցում կամ նոր լուսամուտ ու դուռ բացում՝ քանդելով, քարուքանդ անելով, վտանգի տակ դնելով ե՛ւ իրենց բնակելի շենքը, ե՛ւ շենքի մյուս բնակիչներին: Կապանում այս տարբերակն արդեն մեծ տարածում է գտել, նույնիսկ պատասխանատուներն ի զորու չեն այս անօրինական գործունեության դեմն առնել: «Աշխատանքներ տանում ենք, որ քաղաքի տեսքը գոնե կենտրոնական հատվածում կարողանանք պահպանել, բայց մեր քաղաքացիները, ցավոք, չեն ցանկանում դա անել: Համայնքի ղեկավարությունը եւ մարզպետարանն ի վիճակի չեն այդ ամենի առաջը կանգնեցնել: Մենք կցակառույց պատշգամբները տեսնում ենք միայն այն ժամանակ, երբ այդ աշխատանքներն արդեն մեծամասամբ արված են լինում: Իսկ քաղաքացիներին դիմելիս պարզվում է, որ նրանք այդ աշխատանքներն արել են առանց համապատասխան թույլտվության: Կանխարգելող մեխանիզմը գործում է, բայց ավելի շատ ու ավելի արագ հայկական մենտալիտետն է գործում, մեր քաղաքի փոքր լինելն ու բնակիչների իրար ճանաչելը: Ոչ մեկն այդ բարբարոսություն անող մարդու ձեռքից չի բռնում ու չի կանխում: Կապան քաղաքն ունի գլխավոր հատակագիծ, եւ այդ հատակագծով պարտավոր է առաջնորդվելու համայնքի ղեկավարությունը, իսկ ինչ վերաբերում է կառուցապատմանը, ապա այն պետք է իրականացվի՝ խստագույնս պահպանելով գլխավոր հատակագծով նախատեսված նորմերը»,- նշում է Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արշակ Ուստաբաշյանը:

Նման անօրինական շինարարություն պատասխանատուների կողմից վերջերս արձանագրվել է Կապանի Երկաթուղայինների թիվ 1 հասցեի բազմաբնակարան շենքում, որտեղ բնակիչն ինքնուրույն 5-րդ հարկում պատշգամբ է բացել՝ քանդել շենքի կրող պատի մի հատված՝ վտանգելով շենքի ամրությունը: Կառավարության անցած տարեվերջին ընդունած նոր կարգի համաձայն, անօրինական շինարարության համար տուգանքի ավելի մեծ չափ է սահմանվել: «Բնակիչների հետ ապօրինի շինությունների հարցերով բախվելիս, զգում ենք, որ նրանք հիմնականում տեղյակ չեն օրենսդրությանը, թե ապօրինի շինարարության դեպքում ինչ է սպասվում իրենց, ինչ տուգանքներ են նախատեսվում: Քաղաքացիներին խորհուրդ կտանք, որ ցանկացած քաղաքաշինական գործունեություն ծավալելուց առաջ դիմեն մարզպետարանի կամ քաղաքապետարանի համապատասխան բաժիններ, ծանոթանան կանոններին, որ հետագայում խնդիրների տեղիք չտան»,- նշում է Կապանի քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Արմեն Ստեփանյանը:

ՄԵՐԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ





Կապանի քաղաքապետարանի եւ մարզպետարանի շենքերի տեսքը ակնահաճո է, ինչը չես ասի քաղաքի բնակելի շենքերի մասին:

---

### Արմավիրում ստուգվել է 30 կրթօջախ, հայտնաբերվել՝ 22 խախտում



ՀՀ Արմավիրի մարզպետարանում քննարկվել է մարզի հանրակրթական 30 ուսումնական հաստատություններում (5-ը ավագ դպրոց, 18-ը՝ միջնակարգ, 7-ը՝ հիմնական) ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կրթության պետական տեսչության 2011 թվականի հոկտեմբերի 17-դեկտեմբերի 2 հատվածում իրականացրած կրթական գործունեության ուսումնասիրության արդյունքը: Տեսչությունը ստուգել էր հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների եւ նրանց տեղակալների պաշտոնային պարտականությունների կատարումը, դպրոցի կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների, առարկայական մասնախմբերի, մանկավարժական աշխատողների, սովորողների գործունեությունը, ուսումնական միջավայրը:

Մարզպետարանի տվյալով, կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 22 հանրակրթական ուսումնական հաստատությունում, կազմվել է 22 արձանագրություն: Հայտնաբերված խախտումների հետեւանքներն ու թերությունները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչը խախտում թույլ տված ուսումնական հաստատությունների տնօրեններին տվել է կատարման համար պարտադիր 20 հանձնարարական, իսկ կառավարման խորհուրդների նախագահներին՝ 6:

Այսքանից հետո մարզպետը խոստացել է, որ արձանագրված խախտումները չեն կրկնվի:

---

# «Չեմ ուզում, որ իմ երեխան զգա անմայր մնալու զրկանքները»



Արդեն տեւական ժամանակ է՝ Վանաձորի քաղաքապետարանի անչափահասների գործերի, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի եւ Լոռու մարզպետարանի երեխաների, կանանց ընտանիքների պաշտպանության բաժնի ուշադրության կենտրոնում Վանաձորի բնակչուհի Նելլի Սարգսյանի հարցն է: Նելլին ամուսնալուծվելուց հետո երեխայի հետ դրսում է մնացել, ըստ նրա նկարագրածի, հայրն ու խորթ մայրը արգելել են երեխայի հետ վերադառնալ հայրական տուն: Ավելին, հայրը ծեծել է ամուսնալուծվելուց հետո հարազատ քաղաք վերադարձած Նելլիին:

Լոռու մարզպետարանի երեխաների, կանանց, ընտանիքների պաշտպանության բաժինը դրսում մնացած մորն ու մանկանը տեղավորել է «Հույսի տուն» հ/կ-ում, որտեղից 3 ամիս անց Նելլին վերադարձել է՝ մեկ այլ շահառուի եւ տնօրինության հետ կոնֆլիկտներ ունենալու պատճառով: Ըստ պայմանագրի, նա «Հույսի տանը» պետք է բնակվեր 2 տարի:

Մարզպետարանի երկրորդ միջամտությունից հետո նրան 30 օր փորձաշրջանով եւ պայմանական թողել են մնալ կացարանում եւ պարտավորեցրել, որ մասնակցի խոհարարական, կարուձեւի, համակարգչային դասընթացների, Հայ առաքելական եկեղեցու Արմավիրի թեմի կազմակերպած ծնողավարական եւ կենցաղավարման սեմինարներին: Այս անգամ էլ իր դիմումի համաձայն է նա լքել կացարանը:

Նելլին ասում է, որ դիմում գրել է ոչ իր կամքով, հերքում է, որ առողջական խնդիրներ ունի: «Մարդուն վատաբանելն ու գցելը շատ հեշտ է, ես չեմ ուզում իմ ամուսնու հետ որեւէ առնչություն ունենալ, նա հաշմանդամ է, միայն ուզում եմ իմ երեխայի մասին մտածել»,- ասում է Նելլի Սարգսյանը:

Երեխային ժամանակավոր տեղավորել են Վանաձորի մանկատանը, մի քանի օր Նելլին է այցելել մանկատանն ու խնամքի կենտրոնում: Օրվա հացի փող վաստակելու համար զբաղվել է ծեր կնոջ խնամքով: Նրա հարցով զբաղվող պետական օղակները մի քանի անճշտություն են նկատում: Նելլին հրաժարվել է հիվանդության թոշակ ստանալուց, այնինչ՝ հանձնաժողովը պնդում է, որ նա ունի դրա կարիքը: Նա թաքցնում է մի քանի անգամ ամուսնանալ-ամուսնալուծվելու փաստը: Ասում են՝ նա անկայուն բնավորություն ունի եւ հորն էլ է հանիրավի մեղադրում՝ իրեն ծեծի ենթարկելու համար:

Նելլին շատ է ուզում երեխային հասանելիք գումարն անձամբ ստանալ: Անչափահասների գործերի, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովին ասել է, թե երեխայի հագուստ ու անհրաժեշտ իրեր կգնի: Հանձնաժողովը, սակայն, պնդեց, որ նա գումարը կստանա այն ժամանակ, երբ երեխան իր հետ լինի: Երեխան մանկատանը անհագուստ եւ սոված չի մնա:

Վանաձորի քաղաքապետարանի անչափահասների գործերի, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովը որոշել է նաեւ, որ Նելլին չի զրկվի իր երեխային մեծացնելու իրավունքից, բայց առաջիկա շաբաթվա ընթացքում բժշկական հետազոտություն կանցնի, որից հետո քաղաքապետարանն ու մարզպետարանը կմիջնորդեն աշխատանք գտնելու համար: «Օրերը մի քիչ տաքանան՝ իմ երեխային վերցնելու եմ, ես 6 տարեկանից անմեր եմ մեծացել, չեմ ուզում, որ իմ երեխան էլ զգա անմայր մնալու զրկանքները»,- ասում է Նելլին:

Հանձնաժողովում, սակայն, մտավախություն ունեն, որ Նելլին ի վիճակի չէ երեխա պահել՝ առողջական խնդիրներ ունի եւ անգործ է:

ՆԵԼԼԻ ՂԱՎԹՅԱՆ

# «WebԾիրան» առցանց փառատոնի խութերն ու ոտուղները

Երեկ ամփոփվեցին «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի եւ Webtv.am հեռուստատեսության նախաձեռնությամբ, «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության աջակցությամբ կայացած համահայկական առցանց «WebԾիրան» կինոփառատոնի արդյունքները: Անցյալ տարվա նոյեմբերի 15-ից մեկնարկած «WebԾիրանի» ընթացքում ցուցադրվեց տարբեր ժանրի 49 ֆիլմ: Մրցանակակիրները որոշվելու էին ինտերնետ քվեարկության արդյունքում: Հիմնադիրների որոշմամբ, սակայն, մրցանակաբաշխության արարողությունը հետաձգվեց. webtv.am-ը արձանագրել էր, որ ծրագրավորման տեխնիկական միջոցներով տեղի են ունեցել միջամտություններ քվեարկության գործընթացին: Էական խախտումներ հայտնաբերելով՝ փառատոնի կազմակերպիչները չեղյալ հայտարարեցին քվեարկության արդյունքները եւ կազմեցին մասնագիտական ժյուրի՝ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի ծրագրերի տնօրեն, կինոքննադատ Միքայել Ստամբոլցյանի գլխավորությամբ, որն էլ որոշեց հաղթողներին:

Գլխավոր մրցանակը եւ 1000 դոլարին համարժեք դրամ շնորհվեց «Աշնան արեւ» ֆիլմի ռեժիսոր Դիանա Կարդումյանին, հատուկ մրցանակը եւ 500 դոլարին համարժեք դրամը՝ The Dead angle ֆիլմի ռեժիսոր Արսեն Այրապետյանին: Խրախուսական մրցանակները 5-ն էին՝ «Թեթեւ հոդում» (ռեժիսոր՝ Նարե Մկրտչյան), «Նախշոյի դորոցը» (ռեժիսոր՝ Գոհար Խաչատրյան), «Էն ուրիշ ֆրունզիկը» (ռեժիսորներ՝ Հովհաննես Պապիկյան, Շուշան Սահակյան), «Օգնիր նրանց հիմա» (ռեժիսոր՝ Արտ-Ներսես) եւ «Bye-Bye» (ռեժիսորներ՝ Արեգ Մկրտչյան, Հրայր Լազյան, Աշոտ Հարությունյան): Ժյուրիի գնահատականները եւ ընդհանուր արդյունքները կարելի է տեսնել նաեւ webtv.am կայքում:

«Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմնադիր տնօրեն Հարություն



Խաչատրյանը կոչ արեց բոլոր այն ռեժիսորներին, ովքեր նկարում են անգամ փոքր տեսախցիկներով, հեռախոսով եւ ինչով պատահի՝ մասնակցել այս եւ հետագայում կազմակերպվելիք փառատոներին: «Կինոն ճարտիկ բաներ սիրում է, բայց այս անգամ ցուցաբերված ճարտկությունը՝ ինտերնետային քվեարկության ժամանակ արդար չէր, եղան մարդիկ, որ այդ ճանապարհով 15000-20000 ձայն հավաքեցին, հենց դրա համար էլ ստեղծեցինք պրոֆեսիոնալ ժյուրի»,- պարզաբանեց նա:

«Զարգացող աշխարհում անխուսափելի է ժամանակակից տեխնոլոգիաների ներթափանցումը նաեւ մշակույթի բնագավառ, ինչը ողջունելի է եւ խրախուսում է տաղանդի բացահայտմանը: Տեխնոլոգիական լուծումների կիրառումը, տվյալ պարագայում ինտերնետը ստեղծագործողին թույլ է տալիս առանց նյութական մեծ ռեսուրսների իր ասելիքը հասցնել լայն հասարակությանը: Չափազանց կարեւոր




Գլխավոր մրցանակակիր Դիանա Կարդումյանը

գործոն, ինչի կարիքն ունեն կինոարվեստն ու սկսնակ ստեղծագործողները»,- նշեց «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Webtv.am-ի տնօրեն Արայիկ Մանուկյանը «Առավոտի» հետ զրույցում կարեւորեց «WebԾիրան» փառատոնի անցկացումը, այն անվանելով ալտերնատիվ հարթակ: «Ընդհանրապես webtv-ին այս մեկ տարվա գործունեության ընթացքում ցույց տվեց, որ շատ ֆիլմեր, հաղորդումներ եւ թեմաներ, որոնք այսօր վտարված են ավանդական հեռուստատեսություններից, ունեն մեծ լսարան ու բազմաթիվ մարդիկ են նայում: Մշակութային այն դաշտը, որին անդրադառնում ենք՝ լինի մոդեռն արվեստ, կինո, թե գրականություն, ալտերնատիվ դաշտ է, ու հասարակությունը ունի դրա պահանջը: Ինչ վերաբերում է «WebԾիրանին», այն խթան հանդիսացավ, որ մեր միջոցներով կազմակերպենք նոր փառատոներ՝ «Ռետրոֆեստ», «Էկոֆեստ» եւ «Դեբյուտֆեստ»,- հավելեց նա:

Մրցույթի ժյուրիի նախագահ Միքայել Ստամբոլցյանը «WebԾիրանը» հեռանկարային է համարում. «Գնալով ավելի շատ հանդիսատես է ինտերնետով ֆիլմեր նայում, քան նույնիսկ կինոթատրոններում, եւ մի տեսակ զատվում են կինոթատրոնի ֆիլմերը, այսպես կոչված՝ «բոյեւիկները» եւ այլն, ու արվեստի ֆիլմերը իրենց տեղը գտնում են ավելի շատ ինտերնետում: Կարծում եմ՝ արժի շարունակել այս գործը, ինչքան էլ առաջին փորձը ինչ-ինչ տեխնոլոգիական խութերի հանդիպեց: Ճիշտ կլինի, որ այսուհետեւ հանդիսատեսի քվեարկությամբ հանձնենք «Հանդիսատեսի համակրանք» մրցանակը, իսկ գլխավոր եւ հատուկ մրցանակները սահմանի մասնագիտական ժյուրին»:

«Էն ուրիշ ֆրունզիկը» ֆիլմի հեղինակներից Շուշան Սահակյանն «Առավոտին» ասաց, որ մրցանակը սպասված անակնկալ էր իրենց համար. «Ամեն դեպքում, երբ ներկայանում ես մրցանակաբաշխության, հույս ունես, որ պիտի շահես»:

«Bye-Bye»-ի ռեժիսոր Արեգ Մկրտչյանը նշեց, որ գնահատում է իրենց տրված մրցանակը եւ կարծում, որ այն իսկապես արժանի է որոշակի գնահատականի: Նրա գործընկեր Հրայր Լազյանն էլ գոհ է փառատոնից, քանի որ այդպիսով հնարավորություն է ընձեռվել, որ շատ մարդիկ դիտեն իրենց ֆիլմը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Պետք չէ համեմատել հայաստանյան եւ արեւմտյան նվագախմբերը

Aravot.am-ի «Լոնդոնի սիմֆոնիկի երաժիշտները մե՛կ անգամ են մրցույթ անցնում» հոդվածում Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի մենակատար, միջազգային մրցույթների դափնեկիր, ջութակահար Ռոման Սիմովիչը փաստել էր, որ իրենց մոտ երաժիշտը մրցույթով ընդունվում է աշխատանքի եւ աշխատատեղը պահելու նպատակով այլեւս մրցույթների ու լսումների չի մասնակցում: Հրապարակմանը արձագանքել են հայ դիրիժորական արվեստի երախտավոր Յուրի Դավթյանը, Ազգային օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանը, Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը:



Ըստ Յուրի Դավթյանի, մի քանի տարին մեկ նվագախմբերում անցկացվող մրցույթներն ու լսումները մեզանում ոչ միայն ձեւական բնույթ են կրում, այլեւ առիթ են դառնում անառողջ խոսակցությունների: «Ժամանակին Թավրիզյանն էլ չէր ընդունում մրցույթների ու լսումների անցկացումը, բայց պարտավոր էր ենթարկվել խորհրդային օրենքներին: Ի վերջո, մենք այսօր էլ չենք կարող համեմատվել արեւմտյան նվագախմբերի նիստուկացի հետ. այնտեղ յուրաքանչյուր երաժիշտ ամեն օր պարապում է, իսկ մեզ մոտ միայն մրցույթից մրցույթ, ունկնդրումից ունկնդրում են պարապում՝ պահպանելու համար համապատասխան մակարդակը»,- նշեց պարոն Դավթյանը: Նա անդրադարձավ նաեւ Ֆիլադելֆիայի եւ Դետրոյթի՝ վերջին տարիներին կազմալուծված ճանաչված սիմֆոնիկ նվագախմբերին. «Միամիտ կլինի մտածել, թե պատճառը համաշխարհային տնտեսական ճգնաժամն էր՝ այնտեղ երաժիշտները բարձր էին վարձատրվում: Պատճառը այլ էր՝ հովանավորների եւ նվագախմբերի կառավարիչների միջեւ ֆինանսական անհամաձայնությունը»:

Կարեն Դուրգարյանը կարծում է,



որ նվագախմբային քաղաքականությունը մեզանում արժե վերանայել. «Հայաստանյան նվագախմբի արտիստը մի քանի հազար դրամ ավելի վաստակելու համար մի աշխատավայրից տեղափոխվում է մյուսը՝ անտեսելով սեփական ժանրային նախասիրությունը: Եկեք չհամեմատվենք լոնդոնների հետ: Անգլիայի փոքր քաղաքն անգամ ունի մի քանի նվագախումբ, ինչը չես կարող ասել Հայաստանի մասին: Պետք է հարգենք ու ամեն գնով աջակցենք մեր երաժիշտներին: Այ, եթե ընդունվի օրենք այն մասին, որ մշակույթ հովանավորողը ինչ-որ չափով ազատվում է հարկերից, ահագին բան կփոխվի: Նաեւ պետք է սերտացնել կապը կոնսերվատորիայի հետ, իմանալու համար, թե ինչպիսի կադրեր են ավարտում: Ինչ վերաբերում է մրցույթներին ու լսումներին, ես դրանց կողմ եմ»:

Էդուարդ Թոփչյանի խոսքով էլ՝ երեք տարի առաջ ֆիլհարմոնիկում մրցույթ էր անցկացվում ու հրաժարվում էին որոշ երաժիշտներից, հիմա նման խնդիր չունեն. «Ամեն գնով ուզում ենք պահել երաժշտին, չենք ուզում՝ որեւէ մեկը հեռանա: Ինչ վերաբերում է ֆիլհարմոնիկում տարին 2 անգամ անցկացվող լսումներին, նպատակը մեկն է՝ որպեսզի երաժիշտները հանդես գան կամերային կազմով: Այս դեպքում առանց դիրիժորի նրանք միմյանց ավելի լավ են լսում, լուծում գեղարվեստական խնդիրներ եւ այլն: Ինչ վերաբերում է Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի կարգին, ապա մեկ թափուր տեղի համար հնարավոր



է՝ բառացիորեն մի քանի հարյուր հայտ ներկայացվի: Բնականաբար, լավագույններից լավագույնն է ընտրվում: Նրանց պայմանագրում նշված է, որ լարային գործիքների երաժիշտները՝ 62 տարեկանից, իսկ փողայինները ավելի շուտ են անցնում թոշակի, թեկուզ գտնվեն ամենալավ «մարզավիճակում»: Այնպես որ, չեմ կարծում, թե մեր եւ արեւմտյան նվագախմբերը համեմատելը ճիշտ է»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# «Հայաստանում որեւէ լրատվամիջոց անկախ լինել չի կարող»

Ասում է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» կազմակերպության ղեկավար Արթուր Սաքունցը:



- Պարո՛ն Սաքունց, ինչ կարծիքի եք այսօր Հայաստանում գործող զանգվածային լրատվության միջոցների անկախության մասին:

- Հեռուստատեսային լրատվական դաշտում գոյություն չունի որեւիցե անկախ լրատվական միջոց, քանի որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, որն իրականացնում է մրցույթ հեռուստահաղորդումների հեռարձակման համար, կատարում է միայն քաղաքական իշխանությունների պատվերը՝ ում թույլատրել, որ հեռուստատեսությանը եւ որտեղ:

- Ամբո՞ղջ հեռուստատեսային դաշտն է վերահսկվում, նաեւ մասնավո՞ր ոլորտը:

- Հեռուստատեսությունը երկու մասի է բաժանվում՝ Հանրային եւ մնացած հեռուստաընկերությունները: Հանրային հեռուստաընկերությունը միակողմանի, տիպիկ այսօրվա քաղաքական իշխանության պրոպագանդիստական լրատվամիջոց է: Մյուս հեռուստաընկերությունները բիզնես են: Բայց քանի որ մոնոպոլացված մեկ բիզնես դաշտ կա երկրում, նրանք էլ են արդեն միանշանակ քաղաքական իշխանության ազդեցության տակ, քանի որ հեռարձակման մրցույթը կանխորոշված է:

- Լրատվամիջոցներին վերահսկելու ի՞նչ կոնկրետ մեխանիզմներ կան:

- Օրենքով հեռուստատեսության գործունեության կանոնների մեջ, եթերաժամանակի բաշխվածությունը, որ այսքան տոկոս պետք է լուր լինի, այսքան՝ սեփական արտադրություն, այսքան՝ զվարճանք, այնպես է դրված, որ որեւէ հեռուստաընկերություն չի կարող ապահովել դա, եթե ուզենա էլ՝ չի կարող: Եվ ցանկացած հեռուստաընկերություն զուտ եթերաժամի կառուցվածքի ապահովման տեսակետից խոցելի է: Մնում է՝ ենթարկվի հրահանգներին, որպեսզի այդ խոցելիությունը չօգտագործվի իր դեմ եւ որպես ճնշման հիմք չդառնա: Թերթերից ոչ մեկը սեփական եկամուտներով, նկատի ունեմ գովազդով, բաժանորդագրությամբ չի կարող գոյատեւել: Ակնհայտ է, որ այստեղ կան, այսպես ասած, «թաքնված» կամ գաղտնի հովանավորողներ: Ով որ հովանավորում է, նա էլ թելադրում է լրատվական նյութերի ուղղվածությունը:

- Ի՞նչ է պետք լրատվամիջոցին անկախ լինելու համար:

- Անկախ՝ նշանակում է գովազդ, անկախ գովազդ: Բոլոր նորմալ ժողովրդավարական երկրներում շուկայական ազատ տնտեսության պայմաններում գովազդը լրատվական միջոցի հիմնական եկամուտն է, որովհետեւ տնտեսության մեջ մրցակցություն կա, ինքն էլ ուզում է իր գործունեությունը, իր ապրանքները ավելի շատ գովազդվեն ընթերցողների, դիտողների, լսողների միջոցով՝ որպես իր սպառողներ: Մեզ մոտ տնտեսությունը մոնոպոլացված է, նշանակում է՝ մրցակցություն չկա, նշանակում է՝ գովազդային շուկան որեւիցե ազդեցություն չունի, գովազդային շուկան էլ է կառավարվում եւ**ո** թերթերի, եւ**ո** հատկապես հեռուստատեսային լրատվական միջոցների:

- Հայաստանում ընդհանրապե՞ս չկա անկախ լրատվամիջոց:

- Ընդհանրապես որեւէ լրատվական միջոց Հայաստանում անկախ լինել չի կարող:

ԱԴՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
Վանաձոր

# Թուրքերը ԵԽԽՎ-ում՝ ընդդեմ Ֆրանսիայի

ԵԽԽՎ-ում Թուրքիայի պատվիրակությունը երեկ շրջանառության մեջ է դրել «Խոսքի ազատության սահմանափակման վտանգները» անվանումով գրավոր հռչակագիր, որին միացել են բավական մեծ թվով՝ 58 պատվիրակներ:



Սակայն ինչպես եւ այլ գրավոր հռչակագրերի մեջ՝ այստեղ էլ է նշված, որ տվյալ փաստաթուղթը պարտավորեցնում, այսինքն՝ արտահայտում է միայն այն անդամների կարծիքը, որոնք ստորագրել են այն:

Գրավոր հռչակագիրը վերաբերում է Ֆրանսիայի Սենատի հունվարի 24-ին ընդունած օրենքին. «Այն սահմանափակում է արտահայտման ազատությունը, ինչպես այն սահմանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: Այն սահմանափակում է խոսքի ազատությունը, ինչպես նաեւ իրավունքը պաշտպանելու անձնական կարծիքը եւ անցկացնելու անկախ հետազոտություն»:

Թեեւ Սենատը քվեարկությամբ մերժել էր այս օրինագիծը հակասահմանադրական ճանաչել, հռչակագրի հեղինակները շարունակում են պնդել, որ այն խախտում է Ֆրանսիայի Սահմանադրությունը. «Կայացած ժողովրդավարական երկրում մարդու հիմնարար ազատության խախտումը լրջորեն վնասում է Եվրոպայի վարկն ու վստահությունը: Ավելին՝ այն վտանգավոր նախադեպ է ստեղծում անդամ այլ երկրների համար՝ սահմանափակելու արտահայտման ազատությունը, ինչպես նաեւ՝ իրենց հայեցողությամբ, անհատական այլ իրավունքներ: Մենք խորապես մտահոգված ենք եվրոպական հիմնարար արժեքներին այս սպառնալիքով եւ դրա լուրջ հետեւանքներով: Մենք դեռ ակնկալում ենք, որ Ֆրանսիայի քաղաքական գործիչները պետք է ձեռնարկեն գործողություններ, քանի դեռ վնասը չի հասել անդառնալի փուլի»:

Բնականաբար, Թուրքիայի եւ Ադրբեջանի պատվիրակությունների անխտիր բոլոր անդամները ստորագրել են այս գրավոր հռչակագրի ներքո: Միացել են նաեւ պատվիրակներ Վրաստանից, Ուկրաինայից, Մեծ Բրիտանիայից եւ այլն: Եվ ամենակարեւորը՝ հռչակագրին միացել են Պաղեստինի ազգային իշխանությունների երկու ներկայացուցիչներ:

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

# Ներկուսակցական խնդիր «Ժառանգություն»-ում

«Ժառանգություն» կուսակցության վարչության քարտուղար Կարինե Հակոբյանն «Առավոտին» է տրամադրել իր պարզաբանումը՝ կուսակցության մամլո խոսնակ Հովսեփ Խուրշուդյանի տարածած հետեւյալ հաղորդագրության վերաբերյալ. «Երեկ «Ժառանգություն» կուսակցության վարչության քարտուղար Կարինե Հակոբյանը, հանդես գալով մամլո ասուլիսում, հնչեցրել է որոշ մտքեր, որոնցից ոչ բոլորն են համընկնում կուսակցության պաշտոնական տեսակետի հետ: Այսպես՝ նա կասկածի տակ է դրել ԿԸՀ-ի կողմից ԲՀԿ-ի՝ ընտրություններին մասնակցելու հայտի ընդունման նպատակահարմարությունը: «Ժառանգությունը» գտնում է, որ բոլոր կուսակցությունների հայտերի ընդունումը ԿԸՀ-ի կողմից պետք է տեղի ունենան օրենքի տառին համապատասխան՝ ապահովելով ազատ եւ օրինական մրցակցություն: Այդ իմաստով մենք չենք գտնում, որ որեւէ կուսակցություն, որը գործում է օրենքի շրջանակներում, պետք է խնդիր ունենա ընտրություններին մասնակցելու համար ԿԸՀ-ի կողմից գրանցում ստանալու առումով: Մենք նաեւ բարձր ենք գնահատում բոլոր այն կուսակցությունների դիրքորոշումը, ովքեր միացել են «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի համատեղ նախաձեռնությանը՝ մեծամասնական ընտրական համակարգից հրաժարվելու նպատակով ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ»:



Ըստ Կարինե Հակոբյանի՝ «Ժառանգության» պաշտոնական տեսակետը ամրագրված է նրա ծրագրում եւ բազմիցս արտահայտվել է Րաֆֆի Հովհաննիսյանի ուղերձներում: Այդտեղ հստակ նշված է, որ կուսակցությունը հավատարիմ է ժողովրդավարության սկզբունքներին եւ ազատական գաղափարներին:

Ուզում եմ հիշեցնել նրանց, ովքեր թյուրըմբռնման մեջ են, որ այդ սկզբունքների մեջ է մտնում իշխանության եւ բիզնեսի տարանջատումը: Հակառակ երեւույթը հանգեցնում է քաղաքական համակարգի մենաշնորհմանը, որին հետեւում է ազատ տնտեսական շուկայի վերացումը եւ այնուհետեւ պետությանը գալիս է փոխարինելու մաֆիան՝ իր դասական եւ լայն իմաստով:

Նրանք, ովքեր լավ ծանոթ չեն «Ժառանգության» գաղափարախոսությանը, թող իմանան, որ մենք դեմ ենք, որպեսզի մեծ բիզնեսի ներկայացուցիչները լինեն Ազգային ժողովում: Հայաստանը, որ համարվում է որոշ պատմաբանների կարծիքով՝ իրական ժողովրդավարության հայրենիքը, Հունաստանից շատ առաջ, այսօր խեղդամահ է արվում մի խումբ «գործարարների» կողմից:

Ես, ի դեպ, իմ խոսքում մեջբերում եմ արել Նախագահի ելույթից եւ հավելել՝ «ուրեմն ի գործ»: Ընդամենը այդքանը: Պետք չէ իմ մտքերը դիտավորյալ աղավաղել, ինչպես նաեւ պետք չէ զբաղվել դեմագոգիայով:

Ինչ նպատակ է հետապնդում իմ մտքերի դիտավորյալ աղավաղումը: Ես մամուլի ասուլիսի ժամանակ քննադատել եմ Սերժ Սարգսյանին՝ առաջին հերթին, ասելով, որ նրա խոսքի եւ գործի միջեւ կա մեծ տարբերություն… ասում է՝ ազատ ընտրություններ է ապահովելու, սակայն գործողությունները ապացուցում են հակառակը:

Օրինակ եմ բերել Երիտասարդական հիմնադրամը, Րաֆֆի Հովհաննիսյանի նամակին չարձագանքելը, եւ նաեւ այն, որ նա ասում է՝ գործարարներ չպետք է լինեն Ազգային ժողովում, սակայն որեւէ քայլ դրա դեմ չի ձեռնարկում: Ինչու են այդպես խառնվել իրար, չեմ հասկանում:

Բայց գիտեմ, ով է դրա կազմակերպիչը:

Իմ «ընդդիմախոսներն» ինձ խորհուրդ են տալիս ընտրել պահը՝ սկզբունքային լինելու համար: Այսինքն՝ առավոտյան 8-10-ը ասել այն, ինչ մտածում ես, որ ճշմարիտ է, հետո՝ 10-12-ը լվանալ ձեռքերը, իսկ դրանից հետո արագ կողմնորոշվել՝ ըստ փչող քամիների ուղղության»:

Առավոտ
aravot daily
ՇԱԲԱԹ 28.01.2012

VivaCell MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Անակնկալ եւ կանխատեսելի արդյունքների տուր




Վեյկ-ան-Զեեում ավարտին է մոտենում շախմատի Tata Steel Chess գերմրցաշարը: Երեկ կայացած 11-րդ տուրն առանձնացավ ինչպես անակնկալ, այնպես էլ ինչ-որ տեղ կանխատեսելի արդյունքներով:

Մրցաշարի միանձնյա առաջատար, Հայաստանի լավագույն շախմատիստ Լեւոն Արոնյանն անսպասելի պարտվեց մրցաշարային աղյուսակն անհույս եզրափակող Դավիթ Նավարային: Նախորդ տուրում 2-րդ հորիզոնական բարձրացած Վասիլի Իվանչուկը զիջեց շախմատի աշխարհի թագի հավակնորդ, իսրայելցի Բորիս Գելֆանդին: Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանի ներկայացուցիչներ Վուգար Հաշիմովին եւ Թեյմուր Ռաջաբովին, նրանց դիմակայությունում «հաջողության հասավ» առաջատարների շարքում ընթացող Ռաջաբովը: Հաշիմովի, ասես, պարտվերով պարտությունը մտածել է տալիս, որ կողմերը լավ հասկանում էին, որ վերջնական արդյունքի տեսանկյունից Ռաջաբովին այդ մեկ միավորն օդի պես էր հարկավոր:

Չնայած կրած պարտությանը՝ Լեւոն Արոնյանը շարունակում է պահպանել միանձնյա առաջատարի դիրքերը:

1. Լեւոն Արոնյան 7,5 միավոր
2. Մագնուս Կարլսեն 7,0
3. Թեյմուր Ռաջաբով 7,0
4. Վասիլի Իվանչուկ 6,5
5. Ֆաբիանո Կարուանա 6,5
6. Հիկարու Նակամուրա 6,0
7. Գատա Կամսկի 5,5
8. Սերգեյ Կարյակին 5,5
9. Լյուկ-Վան-Վելի 5,0
10. Բորիս Գելֆանդ 5,0
11. Վուգար Հաշիմով 4,5
12. Անիշ Գիրի 4,5
13. Վեսելին Տոպալով 4,5
14. Դավիթ Նավարա 3,5

Այսօր 12-րդ տուրում Արոնյանը սեւերով խաղում է Գելֆանդի հետ, Ռաջաբովը՝ Իվանչուկի, Կարլսենը՝ Կամսկու հետ:

### Շախմատում էլ ազատ խոսքի սահմանափակում կա

E3e5 շախմատային կայքը տպագրել է իտալացի կին լրագրող Յանիս Նիզյիի բաց նամակը՝ ուղղված Իտալիայի շախմատի ֆեդերացիային, ՖԻԴԵ-ին ու Եվրոպայի շախմատային միությանը, որում հեղինակը տեղեկացնում է, որ վերջերս անցկացված «Ռեջիո-Էմիլիա» մրցաշարի կազմակերպիչներն իրեն չեն հավատարմագրել այն բանի համար, որ անցած տարի նույն մրցաշարից իր հոդվածներն ու մեկնաբանությունները իրենց դուր չեն եկել:

Լրագրողը, որ պատրաստվում էր կատարել հոլանդական ճանաչված News in Chess շախմատային հանդեսի հանձնարարությունը, ցանկանում է իմանալ վերոնշյալ շախմատային կազմակերպությունների ղեկավարների կարծիքը կատարվածի մասին:

Արձագանքելով լրագրողի հարցադրմանը՝ Chess-News.ru-ն հիշում է, որ իրենք եւս բախվել են նման խնդրի, երբ Թուրքիայի շախմատային ֆեդերացիայի նախագահ Ալի Նիհատ Յազիչիին նույնպես դուր չէր եկել կայքում հրապարակված այն նյութը, որում ասվում էր, թե աշխարհի մի շարք առաջատար հավաքականներ տրամադրված են բոյկոտել կանանց աշխարհի թիմային առաջնությունը: Դրա համար Յազիչին «Ռեջիո Էմիլիայի» կազմակերպիչներից առաջ էր անցել եւ կայքին սպառնացել, թե Chess-News.ru-ին կարգելվի աշխատել Թուրքիայի տարածքում անցկացվող մրցաշարերում:

### Արոնյան-Կրամնիկ մրցամարտ՝ փետրվարին

Շախմատի աշխարհի նախկին չեմպիոն, ռուսաստանցի գրոսմայստեր Վլադիմիր Կրամնիկը մեկ օրով ժամանել է Վեյկ-ան-Զեե, որտեղ ընթանում է շախմատի Tata Steel Chess փառատոնը: Այս մասին տեղեկացնում է Chess-News.ru-ն՝ նշելով, որ այցի նպատակը Լեւոն Արոնյանի հետ վեց պարտիայից բաղկացած մարզումային մրցամարտ կազմակերպելու մասին պայմանագիր ստորագրելն է: Աղբյուրը նշում է, որ ՖԻԴԵ-ի վարկանիշային դասակարգման ցուցակի երկրորդ եւ երրորդ տեղերն զբաղեցնող գրոսմայստերներն ամենայն հավանականությամբ խաղատախտակի շուրջ կնստեն փետրվարի երրորդ տասնօրյակում, ավելի ստույգ՝ փետրվարի 21-29-ին՝ Եվրոպայի քաղաքներից մեկում:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

# «Ղարաբաղցի-հայաստանցի» հասկացությունը քաղցկեղի բջիջ է

## Ասում է երգիչ, երգահան Դավիթ Ամալյանը




Երեկ լրագրողներին հանդիպեցին երգիչ, երգահան Դավիթ Ամալյանը եւ ռազմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանը՝ խոսելով ՀՀ քսանամյա զինված ուժերի ձեռքբերումներից ու բացթողումներից:

Արծրուն Հովհաննիսյանն ընդգծեց, որ բանակի կազմավորման քսանամյակը համազգային տոն է, եւ պետք է հասնենք նրան, որ համայն հայությունը, թեկուզ փոքրիկ սեղանի շուրջ, բայց բաժակ բարձրացնի իրադարձության առթիվ. «Զինված ուժերը մեր պետության գլխավոր անկյունաքարերից են եւ փաստ է, որ անկախության նվաճումից հետո մեր զինված ուժերը 20 տարի շարունակ՝ յուրաքանչյուր օր, լուծել են մեր պաշտպանության խնդիրը»:

Դավիթ Ամալյանը բանակը համարում է միակ կատարյալ արժեքը. «Ստեղծագործողը ձեռնում է կատարյալ դառնալու ճանապարհին, նույն կերպ էլ բանակն է անընդհատ կատարելագործվում: Զիջարով ենք ասում՝ «հզոր բանակ», բայց պետք է պատասխանատու լինենք այդ խոսքերի համար»: Ամալյանը հավելեց, որ անկախ մասնագիտությունից՝ մարդիկ բանակը պետք է սիրեն հարազատ որդու պես, քանի որ, ինչպես ասում են՝ սիրված երեխան լավ մարդ է դառնում:

Հարցի շուրջ Արծրուն Հովհաննիսյանը նշեց, որ բանակը սիրելու հետ մեկտեղ, պետք է առկա լինի առողջ քննադատություն. «Ծնողը չպետք է երեխային ստորացնի: Երեխան ժառանգում է ընտանիքի բարքերն ու թերությունները, հետեւաբար՝ պետք է սիրել եւ կշտամբել նրան՝ անհրաժեշտության դեպքում»:

Դավիթ Ամալյանը բանակի բացթողում է համարում մշակույթի բացակայությունը. «Մշակույթը միայն երգելն ու պարելը չէ, այլ՝ հասարակության հետ շփումը»: Բանախոսը կցանկանար, որպեսզի զինվոր-սպա հարաբերությունները լինեին բացարձակ ընտանեկան. «Պետք է լինի ժողովրդական բանակ: Չեմ ասում, թե զինվորները պետք է տարազ հագնեն, բայց թող սրտով հայ լինեն, քանի որ պետություն-հայրենիք հասկացությունների նույնացման ճանապարհին բանակը կարթողակ է»: Անդրադառնալով բանակային միջոցառումներին՝ երգահանն անկեղծացավ, որ բանակային շքերթների ժամանակ հուզվել է. «Ես ռուսների միջոցառումների ժամանակ ցինիզմ չեմ տեսել, ինչպես մեր պարագայում: Պետք է հասկանանք, որ դասական երաժշտությունը նաեւ բանակի համար է: Բանակային կուլտուրան պետք է բարձր լինի, իսկ շոուն՝ ասելիք պարունակի»:

Երգահանը ընդգծեց նաեւ, որ սխալ է՝ օգտագործել «ղարաբաղցի-հայաստանցի» հասկացությունը. «Դա քաղցկեղի բջիջ է եւ վտանգավոր: Պետք չէ դրանք տարանջատել, ու երեխային Ղարաբաղ բանակ ուղարկելուց լաց լինել»:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

### Ըստ Դորիանի, ծիծաղելի է՝ ամեն բառ թարգմանելու մեր մոլուցքը



Վերջին օրերին սոցիալական կայքերում, աշխատավայրերում, նույնիսկ քաղաքային տրանսպորտում մարդիկ քննարկում, քննադատում էին Լեզվի պետական տեսչությանը, նրա նախագահ Սերգո Երիցյանին, այն բանի համար, որ վերջինը «հայտնագործություն» է արել, սեքս բառը թարգմանել ու «սարքել» է «հաճույքաճխտիկ»:

Սոցիալական ցանցերում մարդիկ տեքստեր էին գրում, օգտագործում նորաստեղծ բառը՝ փորձելով հարմարվել դրա հնչեղությանը:

Օրեր անց Լեզվի պետական տեսչության նախագահ Սերգո Երիցյանը հերքեց տարածված լուրը: «Առավոտի» հետ զրույցում նա ասաց. «Մենք բառաստեղծությամբ, բառաշինությամբ չենք զբաղվում, առավել եւս՝ այդպիսի բառեր շրջանառության մեջ չենք դնում»:

Եվ չնայած «սեքսը» չի փոխարինվել «հաճույքաճխտիկով», այնուամենայնիվ, «Առավոտը» երիտասարդ գրող, բլոգեր Դորիանց փորձեց պարզել՝ եթե բառը «պաշտոնապես» գործածության մեջ դրվեր, նա, որպես գրող, իր «բաց» ստեղծագործություններում կօգտագործե՞ր այն:

«Իհարկե՝ չէի օգտագործի այդ բառն ու նմանատիպ այլ թարգմանությունններ, հատկապես այն դեպքում, երբ աշխարհի բազմաթիվ լեզուներով տվյալ բառերը թարգմանության չեն ենթարկվում: Ուղղակի ծիծաղելի է ամեն ինչ թարգմանելու մեր այդ մոլուցքը: Օրինակ՝ ո՞վ ասաց, թե «ինտերնետն» ու «սթրեսը» պարտադիր պիտի հայերեն թարգմանություն ունենան, երբ այդ բառերն ավելի շատ բան են ասում մեզ, քան իրենց թարգմանությունները: Ի՞նչ ենք ուզում մենք ապացուցել աշխարհին՝ էդ «մառազմ» թարգմանչական գործունեությունը ծավալելով: Երեւի, որ հարուստ լեզու ունե՞նք, հա՞...»,- պատասխանեց Դորիանը:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ